№ 78 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 14

1906

ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 14 № 78

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ Ապրիլի 1-ից մինչև 1 յուլիսի 2 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնը)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԺՇԿԱՊԵՏ

ԳՐԻԳՈՐԻ ԵՕՍԻՓՕՎԻՉ ԳՈՒՐԳԷՆՕՎ

Խարկովի համալսարանի մանկաբարձական և գինէկօլօգիական կլինիկայի նախկին օրդինատոր (պրօֆէսոր Տօլօչինովի) ընդունում է մանկաբարձական և կանանց հիւանդութիւններ ունեցող հիւանդներին։ Առաւօտեան 10—12 ժ. և երեկոյեան 5—7 ժամը։ Գօլօվինսկի № 12, տուն Մղիվանիի, Արտիստական ընկերութեան հանդէպ։

(չ. հ. ու.) (ատ) 10—10

Ծախվում է

ՀԻՒՐԱՆՈՑ կահաւորված սենեակներով։ Ցանկացողները թող դիմեն՝ Թիֆլիս, Ավճալեան փողոց № 14, տուն Կուզմինովի, Սարգիս Խաչատուրովին։

(չ. ու. շ.) 2—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ձեռք ձեռքի տուած. Վերջին տեղեկութիւններ. Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան ընտրութիւնների մասին. Պետական Դումայի շուրջը. Մամուլ. Քաղուածքներ արտասահմանեան հայ մամուլից. Գանձակի և Ելենենդօրֆի հարևանները բազմանալը և Թօփալ-Հասանլուն. Տեղեկատու. Ջանգեզուրի. Նամակ Գօրուց, Նամակ Սղնախից. Հայի աղէտը Սև ծովի ափում. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՁԵՌՔ ՁԵՌՔԻ ՏՈՒԱԾ

I

Բաւական չէ, որ ընդհանուր պայմանները աննպաստ են, մենք կովկասցիներս էլ աւելացնում ենք մեր ցաւը ու դժբաղդութիւնը։

Ամբողջ պետութիւնը հեծում է հին ռէժիմի ծանրութեան տակ։ Եւ մենք, իբրև պետութեան մի մասը, բնականաբար կրում ենք այդ ծանրութեան քայքայիչ և ճնշող բեռը մեր ուսերի։

Բայց մենք մեր կեանքի յատուկ թերութիւններով և քաղաքական ու հասարակական տհասութեամբ առիթ ենք տալիս, որ այդ ընդհանուր ծանրութիւնը աւելի ևս մեծ չափով տարածվէ մեր երկրում և հալումաշ անէ մեզ բոլորիս։

Մենք աչքի առաջ ունենք այն հակառակութիւնը, որոնք ծագել են ազգայնական ու կրօնական հողի վրա և խոչընդոտ են հանդիսանում մեր առաջադիմութեան համար։

II

Մի քանի տարի առաջ, երբ ազգային հակառակութիւնները արտայայտվում էին միայն խօսակցութիւնների և վիճաբանութիւնների մէջ, բոլորը տրամադիր էին կարծելու, որ նրանք կամաց-կամաց կը մեղմանան և կանհետանան, տեղի տալով փոխադարձ գործակցութեան և համերաշխութեան գաղափարին։ Սակայն իրականութիւնը դրեց մեր առաջ թիւրիմացութիւնների բազմաթիւ տխուր փաստեր։ Իսկ այն մեծ արհաւիրքը, որ հայ-թիւրքական ընդհարումներ անունով, ողողեց արևելեան Անդրկովկասը, ցոյց տուեց, որ ազգերի մէջ եղած խորութեան զգացմունքները կարող են նոյն իսկ այնպիսի արտայայտութիւններ ստանալ, որ արդէն կարող են ազգերի կործանման առիթներ լինել։

Մենք լաւ ենք հասկանում, որ այդ զգացմունքների գոյութիւնից օգտվել է դաւադրական ոգին, խառնակութիւններ առաջ բերելու, բայց հէնց հարցն էլ նրանումն է, որ մեր կովկասցիների մի մասը անկարող եղաւ դիմադրելու դաւադրութեան և գցեց մեր երկիրը մի այնպիսի դժոխքի մէջ, որից շատ դժուար է դարձել աջողութեամբ դուրս գալը։

III

Եթէ ուշադրութեան առնենք այն վնասները, որ ստացաւ Բագուի ամբողջ շրջանը, եթէ թուենք մի առ մի Նախիջևանի, Շարուր-Դարալագեազի, ամբողջ Գանձակի նահանգի, Բօրչալուի գաւառի և մի քանի ուրիշ գաւառների կորուստները և եթէ հաշուի առնենք մեր երկրի անտեսական քայքայումը հայ-թիւրքական ընդհարումների պատճառով, մենք կը տեսնենք, որ միայն արևելեան Անդրկովկասը առնուազն կորցրել է մի հարիւր միլիօն րուբլու արժէք մեր երկրից։

Սա շատ մեծ գումար է, բայց սա ոչ միայն չափազանցրած չէ, այլ աւելի պակաս է քան իրականութեան ցուցմունքներն են մեզ տալիս։

Եւ ինչու մենք պէտք է այդ սարսափելի կորուստները տայինք։ Ում օգտի համար։ Ոչ ոքի։

Մենք մինչև այժմ համեմատաբար քիչ ենք խօսել այդ կորուստների մասին, որովհետև աւելի սոսկալի կորուստների հարցն է դրված եղել մեր առաջ—մարդկանց կորուստների։

IV

Մենք սուր ընդհարումներ չենք ունեցել մեր հարևան վրացիների հետ և շատ տեղերում հայերը ամենամտերմական յարաբերութիւնների մէջ են վրացիների հետ, բայց և այնպէս չէ կարելի ասել, որ մենք երկու ազգերս լիակատար վստահութեամբ ենք նայում միմեանց վրա։ Մինչդեռ մենք լուրջ առիթներ չունենք ոչ հակառակելու, ոչ հալածելու միմեանց։

Վրացիների արած կուլտուրական և քաղաքական առաջադիմութիւնները միայն համակրութիւն կարող են ներշնչել դէպի նրանց և մենք ուրախ ենք եղել արձանագրելու մի շարք մխիթարական լուսաւոր երևոյթներ վրաց կեանքի մէջ։

Եւ ուրիշ ինչ զգացմունք կարող էինք ունենալ, եթէ ոչ համակրական դէպի այն բոլոր ջանքերը, որ անում է վրաց նոր արթնացած գիտակցութիւնը իր առաջադիմութեան ճանապարհում։

V

Եթէ վրացիները կարողանային հասարակական կեանքի աչքի ընկնող առաջադիմութիւններ անել, եթէ նրանք ծածկէին ամբողջ Վրաստանը դպրոցներով և կրթական ու ուրիշ կուլտուրական հիմնարկութիւններով—նրանք դրանով մեծ օգնութիւն արած կը լինէին ոչ միայն իրանց, այլ և բոլոր կովկասցիներին։

Նոյնը կարող է վերաբերվել թիւրքերին և ուրիշ կովկասեան ազգերին, որոնց մէջ դեռ թոյլ է կամ դեռ չէ արթնացած կուլտուրապէս գործելու գիտակցութիւնը։

Մենք հայերս միայն ուրախանալ կարող ենք մեր հարևանների առաջադիմութեան, որովհետև այդ ճանապարհով կը բարգաւաճէ մեր բոլոր երկիրը և ստեղծված կը լինեն մեզնից իւրաքանչիւրի համար ընդարձակ, լայն ու խոր զարգացման նպաստաւոր պայմաններ։

Իսկ միմեանց խանգարելով մենք կը վնասենք իւրաքանչիւրիս և մեզ յատկապէս։

VI

Միմեանց չը վնասելու, համերաշխ գործելու, փոխադարձութիւն հաստատելու գաղափարները կամաց-կամաց մտնում են կովկասեան գործողների գիտակցութեան մէջ, բայց ներգործական և կազմակերպական փորձեր չեն արված իրականացնելու այդ գաղափարները կեանքի մէջ։

Իսկ կեանքը չէ սպասում։

Եւ ահա այսօր մեր երկրի ընթացիկ հոգսերի, վաղը Պետական Դումայի ընտրութիւնների, միւս օրը զեմստվային գործունէութեան, իսկ այնուհետև բազմաթիւ ուրիշ հարցերի վերաբերութեամբ մենք պէտք է զգանք մեր բաժանված լինելու անյարմարութիւնները և վնասները։

Մեր երկիրը պահանջում է, որ մենք իբրև մի երկրի քաղաքացիներ հեռացնենք այն բոլորը, ինչ որ խոչընդոտ է հանդիսանում մեր համերաշխ գործունէութեան համար և աւելացնում է մեր երկրի թշուառութիւնները։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երևան, ապրիլի 11-ին

Երբ զինուորական Թուշցիկ խումբը, շրջելով երևանեան նահանգի գիւղերը, հասնում է Ղամարլու, մի խմբեցի հայ գիւղացի, վերցնելով իրան իբրև թարգման ղամարլուեցի պ. Բաբախանեանցին, գնում է գնդապետի մօտ և յայտնում է Խոր-վիրապ վանքի թալանումը թիւրքերից։ Գնդապետը վանահօր հետ ուղարկում է վանքը գաւառապետի օգնական պ. Ֆիլիպպովին. բայց վերջինս գնում է միայն և տեղեկութիւն տալիս, որ նոր ոչինչ չէ եղել, իսկ հնի մասին արձանագրութիւն կայ կազմած։ Հայերին իբրև սուտ լուր տարածողի (թարգմանին և խմբեցուն) ենթարկում են տուգանքի, առաջնին 500 ր. կամ 3 ամիս բանտ, որը գերազանցում է 500 ր. տալը քան բանտ նստելը, իսկ երկրորդին ուղղակի 3 ամիս բանտ։

Անցեալ շաբաթ երդուեալ հաւատարմատարի օգնական պ. Լևոն Մուշեղեանցը գործով գնալով Ղամարլու, երբ գիւղացիք պատմում են սրան, սա հետաքրքրվում է վանքի հետ պատահած թալանով և վերոյիշեալ երկու անմեղների պատիժներով։ Հաստատ իմանալով ժողովրդից, որ իրօք վանքը թալանված է, անձամբ գնում է ստուգելու (վանքը երեք կողմից շրջապատված է թիւրք գիւղերով) և բացի թալանը տեսնում է նաև սրբապղծութեան հետքեր, բայց դժուարանում է որոշել, թէ երբ են կատարվել այդ աւերումները։ Չը մոռանամ ասելու, որ վերջին ժամանակները վանքի պահապանը եղել է թիւրք և դռները բաց, որովհետև համարեա մէկ տարի է ինչ վանահայրը հեռացել է վանքից ահից ու սարսափից։ Հետևապէս վանքի մուտքը կարող էր ազատ լինել ամեն ժամանակ անկոչ հիւրերի համար։ Խմբեցին և ղամարլուեցին, ինչպէս իմացանք, վանքի թալանման մասին իմացել են Թուշցիկ խմբին յայտնելու առաջին օրը. յամենայն դէպս նրանց ասածը սուտ չէ եղել, ինչպէս մեղադրում են, այլ մի կատարված ճշմարտութիւն, որի երբ լինելը նրանց յայտնի չէ եղել։

Պ. Լ. Մուշեղեանցը Երևան գալով, յաջորդի հետ ներկայանում է նահանգապետին և պ. Մուշեղեանցը պատմում է իր տեսածը վանքում։ Նահանգապետը հրամայում է կանչել գաւառապետի օգնականին բացատրութիւն տալու։ Երևանում գաւառապետը կանչում է պ. Մուշեղեանցին և հարցնում է իր օգնականի և տեղական պրիստաւի ներկայութեամբ, որը մանրամասնօրէն պատմում է իր տեսածը։ Յետոյ բոլորը միասին գնում են նահանգապետի մօտ, ուր նորից Մուշեղեանցը պնդում է իր ասածների վրա և աւելացնում է, որ այսպիսի մի ապօրինի որոշում անմեղ մարդկանց վերաբերմամբ ժողովուրդը համարում է անարդարութիւն և խնդրում է իր կողմից անմեղներին ազատել ու մեղաւորներին պատժել, որովհետև միմիայն այդ միջոցով կարելի է ժողովրդի յուզված մտքերը խաղաղեցնել։

Նահանգապետը, որ նոր էր վերադարձել Նախիջևանից և տեղեակ չէր գործին, պատուիրում է ամբողջ գործը ներկայացնել իրան և քննելով գործը, հէնց այդ երեկոյեան հրամայում է արձակել մէկին բանտից, իսկ միւսին վերադարձնել ստացված տուգանքը։ Բացի այս, հրամայում է տալ վանահօրը պահապաններ վանքը վերադառնալու և նորից ապահով ապրելու համար։ Իսկապէս գովելու արժանի է պ. Մուշեղեանցի գործ դրած ջանքը, որովհետև շատ անմեղ գիւղեր են ռմբակոծվել, անմեղ մարդիկ տուգանքի ենթարկվել և բանտ նստել, որովհետև մէջը չեն եղել Մուշեղեանցներ, որ գործը պարզէին ու ազատէին անմեղ մարդկանց։ Եթէ չը լինէր Մուշեղեանցը, սրանք շատերի հետ անմեղ տեղը կապաշխարէին։

Գ. Աղայադեանց

Շուշի, ապրիլի 10-ին

Ապրիլի 9-ին երկու հայ ճանապարհորդներ Խանքենդ-աւանից գալիս են լինում Շուշի։

Խաչքենդուց ներքև գտնվող ձորով անցնելիս՝ թփերի միջից դուրս են գալիս երեք զինված թիւրքեր և հրացաններից կրակ բանում հայերի վրա։

Հայերից մէկը—Կարօ անունով, ընկնում է, վիրաւորվելով ոտից, միւս ընկերը կարողանում է փախչելով ազատվել։

Կարօին և ընկերոջը աջողվում է ճանաչել թիւրքերից երկու հոգու, որոնք խանքենդցի են, Րաշիդ և Շահվալանդ անունով։

Արդեօք, այդ չարագործները կը պատժվե՞ն թէ ոչ...

Սուրէն

Շուշու գաւառում իրանց վերջին սխրագործութիւններով հռչակ վաստակած փոխ-գնդապետ Վէվերնի կօզակների պատժական զօրախմբի օֆիցերները հայ գիւղերը աւերելու, թալանելու, հրդեհելու և կանանց լլկելու մեղադրանքների առիթով հետևեալ հերքումն են ուղարկել «Кавк. Мысль» թերթի խմբագրութեանը.

«Ճշմարտութիւնը վերականգնելու համար մի մերժէք տեղ տալ ձեր խմբագրութեամբ լոյս տեսնող թերթում մեր հետևեալ տողերին.

«Тиф. Лист.» № 68-ում և «Кавк. Мысль» թերթի № 6-ում տպագրվել էին Աշոտ եպիսկոպոսի հեռագիրները Շուշուց՝ այն բոլոր ճնշումների, տանջանքների, աւերի, բռնութիւնների, թալանների մասին, որ կատարել են Շուշու գաւառում գործող զօրքերը։

Զօրախմբի օֆիցերները իրանց քաղաքական պարտականութիւնն են համարում յայտնելու, որ այդ բոլոր մեղադրանքների մէջ չը կայ ոչ մի ուղիղ խօսք. այդ բոլոր նկարագրութիւնները այնքան հեռու են իրողութիւնից, այնքան են խեղաթիւրված, որ ամբողջ զօրախումբը խորապէս զայրացած է այդ չարամիտ բանսարկութիւնից։ Նախ քան ճշմարտութեան վերականգնումը, մենք պարտականութիւն ենք համարում համառօտ կերպով նկարագրելու այն՝ ինչ որ իսկապէս տեղի է ունեցել։

Զօրախմբի նպատակն է պատժել ազգաբնակութեանը զինված յարձակումներ և սպանութիւններ կատարելու համար ոչ միայն հարևան գիւղերի բնակիչների, այլ և պաշտօնական անձանց վրա, կողոպուտներ անելու, փախցնելու և իշխանութեան օրինական պահանջները կատարելուց բացարձակ կերպով հրաժարվելու համար։ Միաժամանակ պատժելու հետ միասին հարկաւոր էր անպատճառ զինաթափ էլ անել, պարագլուխներին պահանջել յանձնելու և վնասվածներին բաւարարութիւն տալու՝ գոնէ տարած անասունների և գոյքի մի մասը վերադարձնելով։

Ի նկատի առնելով այն, որ ոչ մի գիւղ յօժարակամ չուզեց կատարել զօրախմբի հրամանատարի պահանջը, զինաթափ անելու համար մնում էր միայն խուզարկութեան դիմել, պարագլուխներին և զէնքերը չը յանձնելու համար զօրքերից էկզէկուցիա նշանակել, տուգանքների ենթարկել, իսկ եթէ պահանջները յամառաբար շարունակեն չը կատարել՝ ռմբակոծել գիւղը թնդանօթային կրակով։ Այդպիսով, Ջնաթաղում, Դրախտիկում և Իսպահանջիքում թնդանօթային մի քանի ռումբերով հրդեհվել էին տները։ Տօղում և Ճարտարում մի մի տուն պայթեցրված է, նոյն գիւղերում խուզարկութեան ժամանակ գտնված վառօդով։ Տօղում պայթեցրված է հայոց յեղափոխական խմբի կօմիտեի կրակոտ անդամ Մուսայէլեանցի տունը, իսկ Ճարտարում այն մարդու տունը, որ այս տարի մարտի 11-ին կրակել էր գենեռալ-նահանգապետի վրա։ Չը նայելով, որ յանցաւորը հէնց այնտեղ, գիւղումն էր, բայց բնակիչները յամառաբար չուզեցին նրան յանձնել մեզ։ Պայթեցրված և ռմբակոծված տները Տօղում, Ճարտարում և Իսպահանջիքում այրվելիս երկար ժամանակ լսվում էին ռումբերի, վառօդի, փամփուշտների և ուրիշ ռազմամթերքների պայթիւններ, ուստի հէնց իրանք գիւղացիները, որոնց առաջարկվեց հանգցնել կրակը, երկիւղ էին կրում մօտենալ։

Բոլորը, ինչ որ ասված է յօդուածներում կանանց բռնաբարութեան, գլխի զարդերը, արծաթէ գօտիները և կանանց ուրիշ զարդարանքները խլելու մասին՝ ուղղակի սուտ զրպարտութիւններ են։ Բացի Ջանախչում և Թաղում, միւս գիւղերում մենք չենք տեսել ոչ մի կին. բայց այդ գիւղերում այդ տեսակ գանգատներ չեն յարուցվել։ Իսկ միւս բոլոր գիւղերից բնակիչները, կամենալով զօրքերին թողնել առանց որևէ պաշարի, դուրս էին տանում բոլոր բան, զօրախմբի գալուց շատ առաջ, և իրանք էլ հեռանում էին։ Այսպէս եղաւ, օրինակ, Ազօխ գիւղում, որտեղ բնակիչների բացակայութեան պատճառով, անկարելի եղաւ նոյն իսկ պատժել գիւղը, այնպէս որ հարկաւոր կը լինի մի անգամ էլ գնալ։ Այդպիսով Ազօխում անկարելի էր հրամայել թիւրքերին վերցնելու անասունները, որովհետև զօրախմբի համար ուտելու պաշար անգամ չը կար և հազիւ մի կով միայն գտնվեց, որը և հրամանով մորթել։ Տարած անասունների մի մասի համար բաւարարութիւն տրվեց Թաղ գիւղում, ուր զօրախմբի այնտեղ հասնելուն պէս եկաւ սալակաւինցի մի թիւրք, որից 10 գլուխ սևատաւարը և գոմէշները քշել տարել էին Թաղ գիւղի բնակիչները և ինքը թիւրքն էլ 10 օր շարունակ մնացել էր թաղցիների մօտ գերի։ Զօրախմբի հրամանատարի սախմամբ և—փոխադարձ համաձայնութեամբ,—թաղցիները տուին սալակաւինցուն 15 գլուխ մանր անասուններ և մի ջորի։ Այդ ջորին յանձնվեց թիւրքին Ազօխում, որովհետև զօրքը Թաղից գնաց գիշերելու Ազօխում և ջորին բեռնաւորված էր զօրախմբի իրերով։ Բոլոր խուզարկութիւնները տներում կատարվում էին օֆիցերների ներկայութեամբ, ուստի և կողոպուտներ ամենևին չէին կարող տեղի ունենալ։

Անձնասպանութեան և խելագարութեան դէպքեր չեն եղել, այդ ամենը միայն տպաւորութիւն գործելու համար է աւելացրել հեռագրի հեղինակը։

Թաղլարում (կամ Թաղ) տներ չեն հրդեհվել։ Զօրքի մէջ ձիաներին ցորենով չէին կերակրում, իսկ գարի և խոտ վերցնում էին էկզէկուցիայի պատճառով և կամ փողով, այնքան, որքան որ անհրաժեշտ է եղել ձիաներին մի օր ու գիշեր կերակրելու համար։

Ջանախչում զօրախմբի պահանջը եղել է աւելի խաղաղ, որովհետև չը նայելով որ նրանք չը յանձնեցին զէնքերը և այն մարդկանց, որոնց հարկաւոր էր կալանաւորել, բայց և այնպէս գիւղը չը ռմբակոծվեց, իսկ գիւղի վրա նշանակված տուգանքը ներկայացրին միայն 10 օրից յետոյ։ Փոխ-գնդապետ Վէվերն, եսաուլ Ցուգուլիև, պօդեսաուլ Հաջիև I, պօդեսաուլ Բիրիւլկին, պօդեսաուլ Բաշլև, պօրուչիկ Կելլեբեր»։

Տպագրելով վերոյիշեալ նամակը, յիշեցնում ենք մեր ընթերցողներին, որ այդ առիթով հաղորդում է, երևի լաւատեղեակ, պաշտօնական «Кавказъ» թերթը.

«Նախնական քննութեամբ երևան հանված փաստերը բաւականաչափ նիւթ են մատակարարել նախնական քննութիւն սկսելու համար կօզակների պատժական զօրախմբի կատարած ապօրինութիւնների և բռնութիւնների առիթով հայ գիւղերի վերաբերմամբ»։

Գանձակից գրում են «Тиф. Лист.» թերթին.

Պրօվօկացիան շարունակվում է։ Չարամիտ մարդիկ քաղաքում լուրեր են տարածում, որ թիւրքերը նորից պատրաստութիւն են տեսնում հայերի վրա յարձակվելու։

Այդ տեսակ լուրեր կրկնվում են յամառաբար և տարածում են ամենուրեք։

Մի ռուս տիկին, ոստիկանական մի պրիստաւի կին, Թիֆլիսից Գանձակ գնալիս՝ ճանապարհին նոյն իսկ որոշում էր յարձակման օրը։

Այդ տիկինը ասում էր, որ նա Շուշուց իր քրոջից նամակ է ստացել, որ ապրիլի 28-ին կոտորած պէտք է լինի։

Երբ ես նրան հարցրի. ինչու անպատճառ 28-ին պէտք է լինի։

Նա ոչինչ պատասխան տալ չը կարողացաւ։ Պետական Դուման գումարվում է 27-ին, իսկ 28-ին պէտք է լինի կոտորած։

Պարզ չէ, արդեօք, այդպիսի լուրեր տարածելու նպատակը։

Գանձակ, ապրիլի 12-ին

Թիւրքերի մասում բանող դարգար-լեզգին յայտնում է իր նախկին հարևան Աղ. Սափարեանին, որ ինքն պահել է իր մօտ հայի խանութի բոլոր իրերը, բայց չէ վստահանում վերադարձնել և խորհուրդ է տալիս զինուորի հսկողութեամբ գալ և ստանալ։ Սափարեանը իր հետ վերցնելով երկու ընկեր հայերի դիմում է ոստիկանապետին և առաջին մասի պրիստաւին և պահակախումբ պահանջում լեզգու խանութը գնալու համար, բայց նրանցից մերժում ստանալով՝ որոշումեն առանց պահակի գնալ։ Երբ նրանք մտնում են լեզգու խանութը և լեզգին ուզում է դարգարի իրերը յանձնել հայերին, այդ վայրկեանին լեզգու խանութը են հաւաքվում բազմաթիւ թիւրքեր, պահանջում հայերից հեռանալ, իսկ լեզգուն սպառնում սպանութիւն գործել, եթէ կը համարձակվի հայերի իրերը վերադարձնելու։ Հայերը նկատելով որ թիւրքերի և լեզգու մէջ վէճը սուր կերպարանք է ստանում, թողնում են և հեռանում։ Հայերը մտադիր են այս մասին վաղը յայտնելու նահանգապետին։

Բրաջուր գիւղացիների ոչխարների վճարի գործադրութիւնը—վերադարձնել հայերին կամ ոչխարները կամ նրա արժէքը հատը 6 ր., ոստիկանապետի կողմից այնքան ժամանակ ձգձգվեց, որ թիւրքերը սարքեցին բրաջուրցիների գլխին արդէն ձեզ յայտնի պրօվօկացիան։ Նահանգապետն այսօր յայտնեց բրաջուրցիներին, որ վերջիններն էլ տարել են թիւրքերի ոչխարները, «եթէ թիւրքերից առնեմ տամ հայերին, պէտք է որ հայերից էլ առնեմ տամ թիւրքերին»... Այնպէս որ հայերին ոչխարները վերադարձնելու հարցը խափանվեց։

Փոխարքայի հրամանով, գաւառացիների հրաւէրով, քաղաքիս հայերը հաւաքվելով տեղիս փոխանորդարան, պէտք է ընտրէին խաղաղարար մասնաժողովի երեք անդամներ, որոնք որ և է դէպք եղած ժամանակ պատրաստ պէտք է լինեն գաւառապետի հետ, թիւրքերի կողմից դարձեալ ընտրված երեք պատգամաւորների հետ գնալու դէպք պատահած վայրը։

Հայերի կողմից խաղաղարար յանձնաժողովի անդամներ ընտրվեցին երդուեալ հաւատարմատար Յովսէփ Բէգլարեան, Մելիք-Բէգլարեան, Միքայէլ Սիմէօնիչ Ղազարեան, և Ստեփան Տէր-Աւետիքեան։ Ընտրվեցին անձնափոխանորդներ ևս երեք անձինք։

Թիւրքերը շարունակում են իրանց համար միանգամայն վնասակար և անմիտ բօյկօտը։ Մի առևտրական թիւրք, որ մէկ պուդ պանիր էր ծախել մի հայի վրա, թիւրքերի կողմից 50 րուբլի տուգանքի ենթարկվեց։

Մի պարսկաստանցի համշարի, որը ձիաքարշ էր նստել, խիստ ծեծի ենթարկվեց, որ համարձակվել էր հայի ձիաքարշը նստելու։

Երէկ կայարանում բռնվել է Զագամից Գանձակ ուղարկված ութ հակ պղնձեղէն, մի հակ գորգ։ Ապրանք բերող թիւրքը աննհետացել է։ Ինչպէս պղնձեղէնը, նոյնպէս գորգերը պատկանում են բաղձորցիներին՝ Բաղձորի թալանից. նրանց տէրերը ճանաչել են իրանց ապրանքները։ Պրիստաւը խօսք է տուել հայերին, որ թալանը բերելու է հայոց թաղը։

Աւ. Սօլեանց

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս կիրակի բոլոր եկեղեցիներում պիտի կատարվի պատգամաւորների ընտրութիւնը, որոնք և կընտրեն իրանց միջից տասներկու հոգաբարձու։

Այս ընտրութիւնները տարբերվում են առաջվայ հոգաբարձական ընտրութիւններից նրանով, որ թեմիս գաւառները ևս մասնակցելու են, ուղարկելով իրանց պատգամաւորները։—Մի բան, որը նորութիւն է։

Մենք ողջունում ենք այս առաջադիմական ձգտումը—մասնակից անելու թեմի բոլոր ծուխերը դպրոցական գործում։

Դա մի արդարութիւն է, որը մինչև այժմ ոտնակոխ էր արված։ Ուրախ ենք, որ վերադարձրած են ժողովրդին նրա իրաւունքները։ Սա առաջին քայլն է դէպի ընդհանուր համազգային ընտրողական ձևը, որ պաշտպանում ենք մենք։ Ուրեմն ժողովրդի իղձը գոնէ Ներսիսեան դպրանոցի վերաբերմամբ պէտք է մասամբ իրականացած համարել. ժողովրդին է մնում այժմ այս առաջին ընտրողական իրաւասութեան քայլում ցոյց տալ, որ նա հասունացած է. նա պիտի հասկանայ, որ իրաւունքը զգուշութեամբ ու ամենայն բարեխղճութեամբ պիտի գործադրել։

Մենք կը կամենայինք այստեղ ցոյց տալ ժողովրդին նրա պատասխանատւութեան մեծութիւնը, որպէս զի նա այս ընտրութիւնների վրա նայէր իբրև մի սուրբ գործի վրա, որը պահանջում է նրանից անկողմնապահութիւն, բարեխղճութիւն, լրջութիւն։

Ներսիսեան դպրոցը հայի համար մի սրբութիւն է։ Ութսուն ձիգ տարիներ նա մեր միշտ փոթորկված կեանքում ամենամեծ կրթարանն է դառել։ Նա միակ լապտերն էր, որն այսպէս թէ այնպէս, որքան թոյլ էր տալիս թխլոտ քաղաքական մթնոլորտը, աղոտ լոյս էր գցում հայ ժողովրդի տաղտկալի կեանքի վրա։

Ներսիսեան հոգևոր դպրանոցը տուեց ազգին ինչ կարող էր։ Եթէ նա աւելին չարեց, դրա պատճառը մեր քաղաքականապէս իրաւազուրկ դրութիւնն էր։ Այսօր մեզ տրված է դպրոցական ինքնավարութիւն, մենք տէր ենք մեր դպրոցը յարմարեցնելու այժմեան խստապահանջ կեանքին, նրան դարձնելու իրապէս ժողովրդական միջնակարգ կրթարան, որոշ, գործնական—կեանքի համար անհրաժեշտ ծրագրով։

Ներսիսեան հոգևոր դպրոցը չափազանց շատ է վատացած ու յոգնած. նա պէտք է մեռնի իբրև հոգևոր դպրոց և նրա արգանդից պիտի ծնի թարմ, ուժերով լի, ժողովրդական աշխարհիկ դպրոցը, պահպանելով իր մեծ հիմնադրի, Ներսէսի, ընդմիշտ անմոռանալի անունը։ Թող նա կոչվի այժմ Ներսիսեան դըպրոց։ Եւ այդպիսով թող մնայ ժողովրդին, թող նոր սպեղանի դառնայ նրա նոր ցաւերին, թող բաւարարութիւն տայ նրա նոր կենսական պահանջներին...

Ուրիշ ոչ մի կերպ արդի հայ հասարակութիւնը չէ կարող պատւել մեծ հիմնադրի սուրբ յիշատակը, որը ժողովրդի կարիքների համար է հիմնել նրան, և ոչ թէ մի որ և է դասակարգի։

Ամենաէական խնդիրը, որը դրվում է նոր հոգաբարձութեան առաջ, դա նոր շէնքի խնդիրն է, որը [illegible] տասը տարի է ստիպողական է դառել, բայց չէ կարողանում լուծում ստանալ։

Ապագայ հոգաբարձութիւնը պիտի վերջապէս իրականացնի այդ միտքը և տայ դպրոցին մի շէնք, որը վայել լինի այդ մեծ հիմնարկութեանը։

Դպրոցի կալուածքները խարխուլ դրութեան են մատնվել, համարեա աւերակ դարձել։ Երկու մեծ շէնքեր հրդեհված են։

Պէտք է վերաշինել այս բոլոր թանգագին շէնքերը, աւելացնել եկամուտները։

Ուստի հոգաբարձուներ ընտրելիս պէտք է

աչքի առաջ ունենալ այս տնտեսական հարցերը և այնպիսի մարդիկ ընտրել, որոնք եռանդ, եռանդի հետ էլ հմտութիւն և ժամանակ ունենան դպրանոցի կալուածական գործերը անձամբ տնօրինելու առանց վստահելու կառավարչի վրա։

Մեր դպրանոցի սաների մեծագոյն մասը չքաւորներ են, իսկ մի որոշ տոկոսը ծայրահեղ թշուառներ։ Գաւառացիները ապրում են աւելի ևս աննպաստ պայմաններում, քան քաղաքացիք։

Իբրև դպրոցի բժիշկ, ես մօտ ծանօթ եմ մեր սաների կենցաղին ու նրանց առողջական դրութեանը և կարող եմ վստահօրէն ասել, որ նրանց հիւանդութիւնների մեծագոյն մասը առաջ են գալիս կեանքի վատթար պայմաններից,—սնունդի պակասութիւնից, խոնաւ ու ցուրտ բնակարաններից, կեղտոտութիւնից ու տաք հագուստի բացակայութիւնից։

Ապագայ հոգաբարձութիւնը պէտք է համակեցութիւն հիմնի, ձրի կամ մատչելի գնով, աշակերտական ճաշարան հիմնի, հագուստեղէն մատակարարի։ (Առաջ գիշերօթիկներ էինք պահում ու ճաշարան ունէինք ու հագուստեղէն էինք բաժանում, բայց այդ բարիքներից շատ քչերն էին օգտվում, իսկ այժմ այդ ամենը փակված է)։ Անհրաժեշտ է որ հոգաբարձուների մէջ ազդեցիկ մարդիկ լինեն, որոնք ձեռք առնեն օգնութեան հասնել խեղճ սաներին, հիմնելով մի առանձին նպաստամատոյց ընկերութիւն, ինչպէս դա գոյութիւն ունի ռուս գիմնազիաների մէջ։

Այսքանը դպրանոցի տնտեսական պահանջների մասին։

Կայ և ուսումնական մասը, որի վերաբերմամբ մի քանի խօսք։

Հոգաբարձուների մէջ անպայման պէտք է դպրոցական գործին մօտիկ և հասկացող անձինք լինեն։ Մինչև այժմ մեր դպրոցներում հոգաբարձութիւնը խառնվել է ուսուցիչների գործերին։ Մանկավարժական մարմինը ուսուցչական գործը իր մենաշնորհն է համարել, գուցէ այն պատճառով, որ հոգաբարձութիւնները դպրոցական հարցերի մէջ անձեռնհաս էին եղել։

Մեր ուսումնարանական հին կանոնների մէջ պարզ չէ այդ կէտը, թէ ինչ ձայն ունի հոգաբարձութիւնը մանկավարժական հարցերում, յամենայն դէպս Ներսիսեան դպրանոցում, ինչպէս և մեր բոլոր ուսումնարաններում, ղեկավարող անձինք բաժանվել են երկու թայֆայութեան—հոգաբարձութիւն և մանկավարժական մարմին, որոնք իրարից անկախ են տնօրինում դպրոցին վերաբերեալ հարցերը և որոնց մէջ յաճախ եթէ ոչ աչքառու թշնամութիւն, գոնէ մի տեսակ խուլ անբաւականութիւն կայ։

Դպրանոցի օգտի համար այս երկու մարմինները պէտք է խորհրդակցութեամբ գործեն, պէտք է միասին քննադատեն կարևոր խնդիրները։ Այդ նպատակով յաճախ պէտք է կայանայ խառն ժողովներ. երբ հոգաբարձուներից գէթ մի երկուսը մանկավարժական գործը հասկացող մարդիկ լինեն, նրանք աւելի թարմ ուղղութիւն կը մտցնեն մանկավարժութեան, շատ տեղ լճացած, գործունէութեան մէջ։ Հոգաբարձուները պէտք է ներկայ լինեն դասերին, նկատողութեան առնեն ուսուցիչների թերութիւնները և իրանց դիտածները խօսակցութեան նիւթ դարձնեն խառն ընկերական ժողովներում։ Մի խօսքով պէտք է վերջապէս համերաշխութիւն սահմանվի յիշած երկու մարմինների մէջ, որոնք պէտք է ձուլվեն—մի զանգված կազմեն։ Եւ այն ժամանակ յուսով ենք կը վերանայ այն սառցապատը, որը միշտ և ամեն տեղ բաժանել է հոգաբարձուներին ուսուցիչներից։

Վերջապէս չէ՞ որ հոգաբարձութիւնը պէտք է ճանաչի իր ուսուցիչների արժանաւորութիւնները և պակասութիւնները, այլապէս ինչպէս կարող է նա ազատ խղճով հաւանութիւն տալ ուսուցչական խմբի ընտրութեանը։

Այս դիտումներով հրաւիրում ենք ծխականներին այնպիսի պատգամաւորների ձայն տալ, որոնք կարող լինեն վերև յիշածս պահանջներին բաւարարութիւն տալ։

Քուէատուփին մօտենալով, թող ամեն մէկը գիտակցի իր վրա դրած պատասխանատւութիւնը, լաւ կշռած լինի իր ընտրելի արժանաւորութիւնները և ըստ այնմ իր քուէն տայ։

Չը մոռանանք ոչ մի րոպէ, որ բարեխիղճ ընտրութիւններից է կախված Ներսէսի հիմնած դպրոցի վիճակը։

Բժշ. Վ. Արծրունի

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Թիֆլիսի գաւառի քաղաքային ընտրողների համաժողովը, Թիֆլիսի նահանգապետի կարգադրութեամբ, նշանակված է մայիսի 5-ին։

Մայիսի 7-ին քաղաքի վարչութեան շէնութեան մէջ նշանակված է նահանգական ընտրողների համաժողովը, Պետական Դումայի ընտրողներ ընտրելու համար։

Ապրիլի 30-ին նշանակված է բանւորների լիազօրների համաժողով ընտրողներ ընտրելու համար։

Պետերբուրգի քաղաքային հասարակական վարչութիւնը եռանդուն պատրաստութիւններ է տեսնում Պետական Դումայի և Պետական Խորհրդի ընտրեալ անդամներին ընդունելու համար։ Ընդունելութեան ծրագիրը արդէն կազմված է։ «Р. В.»

Մօտ ժամանակներս կայանալիք հոկտեմբերի 17-ի միութեան ընդհանուր ժողովը մտադիր է վերջնականապէս վճռել կուսակցութեան անունը փոխելու հարցը։ Առաջարկվում է երեք անուն. լիբերալ կուսակցութիւն, պրոգրեսիվ կուսակցութիւն և լիբերալ-պրոգրեսիվ կուսակցութիւն։ Հոկտեմբերեանները նոյն իսկ ուզում են կազմել իրանց ծրագիրը։ Այդ ցանկութեան շնորհիւ կուսակցութիւնը բաժանվել է երկու մասի. մէկը ուզում է պահպանել նախկին ծրագիրը, իսկ միւսը, ընդհակառակը, պահանջում է խոշոր փոփոխութիւններ մտցնել, համապատասխան երկրի ընդհանուր ցանկութեան։ Մանաւանդ անդամների երկրորդ մասը պահանջում է, որ անհրաժեշտ է իրանց շարքերում ընդունել և այլադաւաններին։

«Бирж. Вѣд.»-ին հաղորդում են, որ ներքին գործերի մինիստրը հրամանագրել է տեղական իշխանութիւններին, որ այն ընտրողները, որոնց դէմ հիմք չը կայ մեղադրանք զարթեցնելու դատաստանական կարգով, ոչ մի դէպքում չը պէտք է ենթարկվեն հալածանքի և ոչ էլ կալանաւորութեան։

Ամբողջ Դոնեան շրջանում ընտրութիւնները կատարվել են միանգամայն աջող կադետների համար. ընդհանուր առմամբ տոկոսի վերածելով, ստացվել է այս հետևանքը. սահմանադիր-ռամկավարներ՝ 69 %, հոկտեմբերեաններ՝ 4 %, պրոգրեսիստներ՝ 1 % և բրաւակարգի պատկանողներ՝ 1 %։ Միւսների ինչ կուսակցութեան պատկանելը անյայտ է։ Իրանց թեկնածութիւնը դնող պետական պաշտօնեաները և պաշտօնաթող զինւորականները սևացել են՝ չեն ընտրվել։ Այդպիսով Դոնեան շրջանը, որ ունի 5 միլլիօն ազգաբնակութիւն, ընտրել է բրաւակարգի կուսակցութիւնից միմիայն 1 հոգի։ Ուստի նրանց «Голосъ Дона» օրգանը հարկադրված է կամ բոլորովին փոխելու իր սև հարիւրակային ուղղութիւնը կամ ընդհատելու իր գոյութիւնը, նամանաւանդ որ այդ թերթի ակցիօներները, որ բաղկացած են բրաւակարգականներից, անաջողութիւնից յետոյ իրար ետևից հրաժարվում են հրատարակութեանը մասնակցելուց, համարելով աննպատակ և շահ չբերող։

Մինիստրների խորհուրդը օպպօզիցիայի է հանդիպել և ոչ միայն Պետական Դումայում, այլ և բարեփոխված Պետական Խորհրդի մէջ։ Խորհրդի ընտրովի մի քանի անդամներ մտադիր են հէնց սկզբից օգուտ քաղել օրէնսդրական նախաձեռնութեան նոր իրաւունքից։ Պետական Խորհրդի անդամների դիմադրական տրամադրութիւնը զգալի կերպով սաստկացաւ հռչակաւոր «ծրագիրները» յայտարարելուց յետոյ։ Անդամներից շատերը վրդովված են այդ ծրագրով, վրդովված են նրանով, որ կոմսը, ըստ երևոյթին, կարծում է որ կարող է նրանց մոլորեցնել և մտածում է ստիպել այդ երկու հաստատութիւններին՝ Դումային և Խորհրդին, զբաղվել ամենաչնչին բաներով։ Պետական Խորհրդի նոր անդամներից մէկը գործ է ածել նոյն իսկ հետևեալ բնորոշ խօսքը, որ անմիջապէս բերնից բերան է անցել. «մինիստրների խորհուրդը դարձել է զուարճութեան տեղ՝ վօդվիլներ գրելու համար»։ «Путь»

ՄԱՄՈՒԼ

Ժան Ժօրէս, խօսելով ռուսական փոխառութեան և Պետական Դումայի ընտրութիւնների մասին «Humanité»-ում, գրում է հետևեալը.

«Նպատակը՝ Ռուսաստանի պետական վարիչների, որոնք, այս րօպէիս, ցանկանում են հաւաքել Եւրոպայում երկու միլիարդ, և որոնց մեծ պատիւն են անում Ֆրանսիայից խնդրելու դրա կէսից աւելին—շատ պարզ է։ Նրանք սարսափով նայում են այն մերձաւոր ժամի վրա, երբ պէտք է գումարվի Դուման։ Հակառակ իրանց բոլոր մանեվրներին, նրանք անկարող եղան խորտակելու ժողովրդի թափը։ Մեր քաղաքները ընտրում են դէմօկրատների և նրանց օրինակը քաջ է տալիս իր ետևից ազգի մնացեալ մասը։ Ձախակողմեան լիբերալները, ամենայն հաւանականութեամբ, կը լինեն Դումայի ղեկավարող ոյժը, և հաստատակամութեամբ կը պահանջեն ընդհանուր ձայնատուութեան իրաւունքը և սահմանադրական գարանտիաներով մի ռեժիմ։ Սօցիալիստական յեղափոխական կուսակցութիւնները, որոնք ընտրութեան չը մասնակցեցին, բողոքելու համար ընտրողական մի այնպիսի ձևի դէմ, որ զոհում է բանւոր դասակարգը, անկասկած կաջակցեն իրանց գործողութիւններով, երկրում, ձախակողմեան կուսակցութիւնների այն բոլոր փորձերին, որոնց նպատակն է հաստատել ժողովրդի գերիշխանութիւնը, ինչպէս Պարիզի բանւորներն ու գաւառների պատգամաւոր գիւղացիները պաշտպան կանգնեցին, 1789 թւին, Սահմանադիր ժողովի ձախակողմեան թևին։ Միապետութիւնը պէտք է գործ ունենայ ուրեմն մի սարսափելի շարժման հետ. և նա ցանկանում է իրան վերապահել Դուման լուծելու կարողութիւնը, եթէ այս վերջինը անհանգստացնող դառնայ աբսոլիւտիզմի, միահեծանութեան համար։ Բայց ինչպէս լուծել ժողովը եթէ փող չը կայ»։

Ուրեմն, ինչպէս այս խօսքերից հետևում է, փոխառութիւնը կնքված է նախ քան Դումայի հաւաքումը նրա համար, որ եթէ ժողովրդի ընտրեալները շատ գլխացաւանք պատճառեն, Վիտտէ-Դուրնովօի կառավարութիւնը նրանց ասէ. «Բարով եկաք. կարող էք գնալ. առ այժմ ձեզ պէտք չունենք, երբ ունենանք կը կանչենք»։ Բայց հարց է, թէ կարելի՞ է այդքան հեշտութեամբ խաղալ ժողովրդական առեւծի հետ։

*

Աբրամովի սպանութիւնը շարունակում է զբաղեցնել մամուլը։ Նրա մահվան համար բացարձակ մեղադրում են Վիտտէ-Դուրնովօյի կառավարութեան անտանելի քաղաքականութիւնը նոյն իսկ հասարակութեան այնպիսի շրջանները, որոնց ոչ ոք չի համարձակվի կասկածել յեղափոխականների հետ համերաշխ լինելու կամ քաղաքական «ինքնադատաստանին» զիջողաբար վերաբերվելու մասին։

Կարող է, արդեօք, լինել կասկած, ասում է, օրինակ «Веч. Гол.» թերթը,—թէ ով է մեղաւոր պօդեսաուլ Աբրամովի բռնի մահվան մէջ։ Մեղաւոր է նա, ով հարկադրեց պաշտօնական արդարադատութիւնը բացակայել հարկաւոր վայրկեանում, ով սպանեց դէպի նրան ունեցած հաւատը, ով անմիտ կուրութեամբ, շոյելով իշխանութիւն ունեցողներին, հասարակութեան գիտակցութեան մէջ ամրացնեց այն համոզմունքը, թէ նրանց վրա կառավարութիւն չը կայ, որ նրանց հետ կռւելու համար անզօր է օրէնքը։ Միթէ՞ դեռ քիչ են տուած դասերը։ Ժամանակ չէ՞ր, արդեօք, ըմբռնելու, որ վատթար, անձեռնմխելի խաղ է կատարվում, երբ Նէյդգարդների յաղթանակը ձեռք է բերվում Սլէպցովների մահվան, իսկ դատաստանից ազատված Աբրամովները դրա համար կեանքից են զրկվում։ Վերջապէս երբ է ըմբռնելու «սահմանադրական» մինիստրութիւնը, որ նա պարտաւոր է պահպանել ոչ թէ «իշխանութիւնը» ինչպէս ուզում է լինի, այլ «օրէնքը», և որ առանց դրան անարխիան վերջ չի ունենայ։

*

Արտասահմանեան մամուլը շարունակում է զբաղվել Ռուսաստանի վիճակով։ Յայտնի ֆրանսիական ժուրնալիստ Պօլ Ադամ «Journal» լրագրի մէջ տպված իր մի յօդւածում, որը կրում է «ազնւների դասերը» վերնագիրը, ցոյց տալով ազատագրական շարժման համատարած աջողութիւնը և նրա յաղթանակը բացարձակութեան վրա, ի միջի այլոց, ասում է.

«Մեր օրերում նոյն իսկ ռուսաց թագաւորութիւնը հաղորդակից է հանրապետականների ուսման, որը Դիդրօն մի ժամանակ քարոզում էր բօյարներին Եկատերինա II-ի պալատում… Դումայում կը տիրապետէ սահմանադրա-ռամկավարական կուսակցութիւնը և նրա կազմը այժմ այնպէս է, որ ռուսական պարլամենտը կը լինի նոյնպէս ձախակողմեան, ինչպէս ֆրանսիական պարլամենտը։ Դաշնակցութիւնը երկու ազգերի մէջ անպայման աւելի կամրանայ։ Միացած փիլիսոփայական ձգտումների և տնտեսական շահերի ընդհանրութեամբ, երկու ոյժեր՝ արևելեան և արևմտեան, կը ներշնչվեն արդարութեան ոգով, կը կարողանան հարկադրել խաղաղութեան պրուսական համադերմանականներին, որոնք կառավարում են ամբողջ Գերմանիան և Աւստրիան»։

*

«Наша Жизнь» լրագիրը հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում, թէ ինչպէս վերաբերվեցին փոխառութեան «բարձր շրջաններում»։

«Փոխառութիւն կնքելու լուրը ճնշիչ տպաւորութիւն գործեց այդ շրջանների վրա, որովհետև ոչ ոք չէր սպասում, որ փոխառութիւնը կնքվէր այդպիսի ամօթալի պայմաններով։ Վերջին երկու-երեք օրերը շրջանների մէջ լուր տարածվեց, որ բանակցութիւնները փոխառութեան մասին վերջնականապէս ընդհատված են, ի նկատի ունենալով այն շատ ծանր պայմանները, որ առաջարկում են օտարազգիները և յանկարծ յայտնվեց, որ այդ պայմանները ընդունված են։ Կօկօվցեւի յաղթութիւնը դասում են այնպիսիների շարքը, որոնց կրկնութիւնը թողնվում է «առանց զօրքի»։

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻՑ

Ամերիկայի հայ գաղթականութեան մէջ ներկայումս մի բուռն շարժում է սկսել՝ հանգանակութեամբ օգնելու Կովկասի հայ աղէտեալներին։ Զանազան քաղաքներում ուր կան հայկական գաղութներ, միտինգներ են կազմակերպվում, ատենախօսութիւններ են լինում, երեկոյթներ են սարքվում և արդիւնքը յատկացնվում յիշեալ նպատակին։

Այսպիսի մի հանդէս, ինչպէս յայտնում է «Արարատ» թերթը, մարտի 5/18-ին կատարվել է Ջըրսի սիթի մէջ։ Հանդէսին ներկայ է եղել և Ջըրսիի քաղաքապետը, իբրև հիւր, որ ասել է հետևեալ խօսքերը.

«Սուրբ նպատակի մը համար է որ դուք հայերդ այս իրիկուն համախմբուած էք հոս, օգնելու ձեր այն եղբայրներուն, որոնք հեռաւոր երկրի մը մէջ կապրին։ Դժբաղդ հայերը, որոնք թիւրքաց և ռուսաց լուծին տակ կը տառապին, ոչ մի յանցանք չունին, ընդհակառակն անոնք ժրաջան, կորովի ու աշխատասէր ժողովուրդ մըն են, եթէ ապահովութիւն շնորհուի անոնց իրենց երկրին մէջ, անոնք պիտի կարենան այնքան յառաջադիմել, որ մրցակից հանդիսանան էն քաղաքակիրթ երկիրներուն։ Ամբողջ աշխարհի բարեկամութիւնը պէտք է որ հայոց հետ ըլլայ։ Գովելով ձեր հայրենասիրութիւնը, կը թելադրեմ ձեզ, որ ամերիկեան քաղաքացիներ ըլլալով, ատով պիտի կրնաք ձայն մը ունենալ այս երկրին մէջ և ազդեցութիւն գործել ամերիկեան հասարակաց կարծիքին վրա»։

—«Հայրենիք» թերթի մէջ կարդում ենք.

«Chicago Daily News»-ին կը հեռագրեն Լոնտոնէն մարտ 2-ին թէ Վանի միսիօնար Տր. Ռէյնօլտս Գերմանիայէն Անգլիա անցած է նպաստ գտնելու Վանի նահանգին սովատանջ բնակչութեան համար, և մղում տալու ամերիկեան դպրոցները, քօլէճները, որբանոցները և եկեղեցիները պաշտպանելու շարժումին։

«Գերմանիա եղած ատեն—ըսած է միսիօնարը թղթակցին—ազդեցիկ քրիստոնեայ բարեկամներու հարցուցի թէ կրնային բան մը ընել կայսրը համոզելու համար, որ աջակցէր ուրիշներու սուլթանը հարկադրելու համար որ պաշտպանէր իր քրիստոնեայ հպատակները։ Անոնք պատասխանեցին որ ատոր միակ յոյսը հոն է որ Նախագահ Ռուզվելթը խնդրէ կայսրէն միանալ Ամերիկային՝ ապահովելու համար գերման ու ամերիկեան շահերուն Հայաստանի մէջ այն պաշտպանութիւնը, որը կը վայելեն ֆրանսական և միւս ազգութիւնները։ Այս թելադրութիւնը հիմա կը գտնէ Ամերիկեան Պօրտին առջև։

«Այս շաբթու քարտուղար Ճէյմս Պրայսին հետ խօսելու ատեն, ինծի ըսաւ ան, հիմակուհիմա նախագահ Ռուզվելթը միւս ամէն մէկէն աւելի լաւագոյն պատեհութիւնն ունի հայերուն համար բան մը ընելու, որովհետև սուլթանը խոստմնազանց գտնուած է Մ. Նահանգներուն։ Այդ երկիրը պարտաւոր է ան օրէնքի բերել։ Ուօշինկթընի կառավարութիւնը քանի մը թնդանօթանաւեր խրկելու է Օսմանեան Ջուրերը և հոն պահել տալ անոնք մինչև որ սուլթանը կատարէ իր պայմանադրութիւնը։

«Ինծի կը թուի թէ ստուգապէս ոչինչ աւելի պատշաճ պիտի ըլլար ամերիկեան արժանապատւութեան, ալ չխօսելով ազդակող պէտքի մասին՝ ամերիկեան աշխատանքը. կեանքը և սեփականութիւնը պաշտպանելու Հայաստանի մէջ։ Իմ գաւառս չորս օրւայ ձիու ճամբայ է Արարատ լեռէն։ Կոտորածներէն ետք սուլթանը խոստացաւ հարկերը շնորհել, բայց անոնք ծօրէն հաւաքեցին ատոնք։ Ժողովուրդը տնտեսապէս ուժասպառ է և բարենորոգումն անհրաժեշտ է նոյնքան Օսմանեան գանձարանի շահերուն, որքան տառապող բնակչութեան շահերուն համար, որովհետև վերջինս հարկ վճարելու կարողութիւնը արագօրէն անհետանալու վրայ է։ Ցորենին գինը երեք անգամ աւելի բարձր է սովորականէն, և իրապէս սովածութիւնը կը տիրէ։

«Dr. C. D. Usher, իմ գործակիցս, գրելով ինծի, Վանի լճակին արեւելակողմի Գեղեցիկ գիւղէն, յունւար 29-ին, կըսէ թէ երեսունչորս ընտանիքէն հինգը հազիւ հասարակ ուտելիք մը ունին մինչև գարուն, մինչդեռ միւս քանիներն ընտանիքներուն անդամները կ'ապրին ցօղունի, հունտերու և անցեալ տարուան համար ճմլուած խաղողի փուրերու ապացված խառնուրդով մը։ Հետևանքը ստամոքսացաւ, փսխում և մահ է։ Dr. Usher-ի հիւանդանոցը 125 հիւանդներ կը դարմանէ հաճարի կերակուրով, որուն ամբողջ ծախքը օրական մէկ տալեր է։ Այս հաստատութիւնը առաջ ինքզինքը կը պահէր, բայց ժողովրդին աղքատութիւնը ամբողջ ծախքը նետեց ամերիկեան Պօրտին վրայ։

«Մենք սոսկալիապէս պէտք ունինք դրամի, երկրագործական և մեքենական հաստատութիւն մը հիմնելու մեր որբանոցին կից, [illegible] և վուշի ու բրդի [illegible] սորվեցնելու համար. բայց ամէն բանէ առաջ, մենք կուզենք ազատել մեր հաստատութիւնները տուրքէ, ֆրանսականներուն պէս և սուլթանի խոստումներուն համաձայն. մենք կուզենք խաղաղութեան և ապահովութեան թագաւորումը, որ կրնայ ապահովել միայն զսպելով արիւնարբու քիւրտերը»։

—Վանի ամերիկեան վարժարանի կողոպտումն և այրումն։

«Արմենիա» լրագիրը հաղորդում է.

«Ամերիկայի միսիօնարանական Պօրտի քարտուղարը Տ. Պարդըն հեռագիր ստացեր է Վանէն մարտ 19-ին թէ քիւրտեր կողոպտեր և այրեր են ամերիկեան միսիօնարների վարժարանը և այդ խժդժութեան առջև անտարբեր հանդիսատես միայն եղեր են թիւրք զօրքերն ու պաշտօնեաները։ Կառավարութիւնն ալ իր կողմէ զրաւեր է ամերիկեան որբանոցին յատկացեալ ցորենները. որբանոցի օգտին համար միսիօնարների գնած պտղատու ծառերը կտրտուեր են։ Քիւրտերը գրաւեր են նաև որբանոցին պատկանող կենդանիների նախիր մը որ 8000 ֆրանկի մօտ արժէք ունէր։

«Այս լուրը հաղորդելով Պօրտի քարտուղարը. հետևեալ դիտողութիւնն ըրած է. «Եթէ Ամերիկայի պէս հզօր տէրութեան մը քաղաքացիներին հետ այսպէս կը վարուին Թիւրքիայի մէջ, ինչե՜ր չեն պատահիր իրենց հպատակներին որոնք բողոքելու համար դիմելու ատեան մը չունին»։

—Նոյն լրագրի մէջ կարդում ենք.

«Մարզուանի ամերիկեան գօլէճի հայ աշակերտներէ մի քանին ձերբակալուելով Ամասիա տարուած են ուր բանտարկուած կը մընան մի քանի ամսէ ի վեր, բոլորովին անհիմ ու անտեղի կասկածներով։ Ասոնք ամերիկեան հպատակ իրենց բարեկամներէ նամակ ստացած են եղեր որ թիւրք կառավարութիւնը ձեռք անցընելով, երբ կարդացեր է անոնց մէջ թէ իրենց խորհուրդ հաւանութիւն գտած է, այդ «խորհուրդ» բառին դաւադրութեան մը նշանակութիւն տալով, կը բանտարկէ այդ խեղճ պատանիներ և երկար բարակ հարցաքննութիւններու ու չարչարանքների կենթարկէ զանոնք։

Գօլէճին բրօֆէսոր ամերիկացի միսիօնարների միջամտութիւնն ու բարեխօսութիւնները տեղական թիւրք իշխանութիւններին մօտ՝ անօգուտ եղած են. տղայները բանտարկուած կը մնան ամիսներէ ի վեր։ Կարծես թէ թիւրք իշխանութիւնները կը ջանան այդ կերպով վարկաբեկել ամերիկեան գօլէճները և անուղղակի զգուշացնել տեղացիները հոն յաճախելէ։

—Զէյթունի մէջ ժանտատենդ երևան եկեր ու մեռնողներ ալ եղեր են, որոնց մէջ է նաև Զէյթունի զինւորական հրամանատար Թահսինպէյը։ Այդ հիւանդութեան ճարակման առաջն առնելու համար՝ բարձրագոյն հրամանով զինւորական գնդապետ բժիշկ մը և հազարապետ դեղագործ մը Կ. Պօլսէն Զէյթուն գնացեր են, ուր տեղացի հայերն անոնք պատուելու համար՝ անոնց բնակութեան յատկացուցեր են նորաշէն առաջնորդարանը։ Հիւրերն իրենց շնորհակալութիւն և գոհունակութիւն յայտներ են Զէյթունի կաթողիկոսական փոխանորդ Արժ. Տ. Ներսէս Վ. Թապալեանին, շէնքին ճաշակաւոր կահաւորման և իրենց եղած պատիւներին համար։ Զէյթունի երևելիներէն Նազարէթ աղա Կիւլվանքեանն իր տան մէջ հիւրասիրեր է զանոնք։ Հիւանդութեան տևողութեան միջոցին, Զէյթունի եկեղեցիներին մէջ առաւօտ և երեկոյ յատկապէս մաղթանքներ կատարուեր են։ Զինւորական բժիշկները մեկներ են Զէյթունէն, հիւանդութեան առաջն առնուած լինելով»։

ԳԱՆՁԱԿԻ ԵՒ ԵԼԵՆԵՆԴՈՐՖԻ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԸ —ԲԱՂՄԱՆԼԱՐԸ ԵՒ ԹՕՓԱԼ-ՀԱՍԱՆԼՈՒՆ

Վերջերումս այս երկու սրիկայական որջերի մասին շատ գրվեց մամուլի մէջ, բայց և այնպէս արժէր սրանց վրա աւելի մանրամասն և հանգամանօրէն խօսել։ Բաղմանլար կամ աւելի ճիշտ ասած Բաղբանլար (այգեպաններ) Գանձակից հեռու ընկած թուրքաբնակ թաղ է, որի միջով անցնում է սարաբնակ հայերի կարճ ճանապարհը դէպի քաղաքի շուկան. այդ ամենաընտիր ոճրագործների վայրն է, որը անթիւ զոհեր է տանում թէ հայերից և թէ թուրքերից նոյն իսկ խաղաղ ժամանակն էլ. այստեղ ոսկով, ձեռքով, գրաստներով և ընտանի կենդանիներով անհետ կորչում են անփորձ անհատներ, որոնց հետքը—թէփուրը անգամ չէ երևում։ Յաճախ այստեղ, ահագին գոմերի մէջ են թաքցնում բաղմանլարցիք և նրանց զինակից Թօփալ-հասանլուեցիք իրանց աւարը, կողոպուտը, գողացած նախիրները. այս լաբիրինթոսներում են յօշոտում այդ երկոտանի բօրենիները իրանց ձեռքն ընկած զոհերին…

Բաղմանլարցիների հետ ձեռք ձեռքի տուած գործում են և նրանց նման արիւնարբու հարևանները—Թօփալ-հասանլուեցիները, որոնք աւազակների ձեռնասուն աշակերտներ են. սրանց բնակավայրը հիմնված է մօտիկ անցեալում — 20 — 25 տարի սրանից առաջ հետևեալ հանգամանքներում։ Մօտ 30—35 տարի սրանից առաջ գաւառի զանազան թուրք գիւղերից հաւաքվում են արատաւոր և կեղտոտ վարք ու բարքի տէր մարդիկ, սկսում բնակութիւն հաստատել գերմանական Ելենենդօրֆ գաղութից բարձր, գետի ձախ ափի վրա, խոր-խոր ձորերի մէջ, կատարելով մի և նոյն ժամանակ հարևան հայ գիւղերում զանազան ծառայութիւններ—ջրաղացպաններ, նախրչիներ, դաշտային պահապաններ, բայց գլխաւոր պարապմունքը աւելի ճարպիկների համար եղել է գողութիւն, իսկ թագստի տեղը — Բաղմանլար։ Այսպէս հարստանալով կարճ ժամանակում, նրանք գնում են իրանց այժմեան հողը, սեփհականատէր դառնում, Թօփալ-Հասանլու գիւղը հիմնում և սկսում իրանց սիրած արհեստը աւելի լայն չափերով. ցերեկները վխտում են հայ գիւղերում, Ելենենդօրֆի և Գանձակի փողոցներում, իսկ գիշերները որսի գնում, ճանապարհներ կտրում, խանութներ կողոպտում…

Հարկաւոր դէպքերում նրանք դիմում են բաղմանլարցիների ձեռնհասութեան, նրանցից խորհուրդ հարցնում, թէ ինչպէս վարվել այս ինչ կամ այն ինչ հանգամանքներում. մանաւանդ եթէ կողոպուտի, յանցանքի ծաւալը մեծ է և իրանք, Թօփալ-հասանլուեցիները՝ անկարող են մարսել ինքնաբերաբար, դիմում են Բաղմանլարի օգնութեանը։ Այսպէս Թօփալ-Հասանլուն դարձաւ շրջակայ հայ գիւղերի և Ելենենդօրֆի համար մի կատարեալ պատուհաս, Ալլահից զրկած մի ցասում։

Թօփալ-հասանլուեցիները ոչ վարում են և ոչ էլ ցանում, բայց բոլոր հարևաններից լաւ ապրում, գեղեցիկ հագնված, ոտքից մինչև գլուխ զինված նրանց կարելի է տեսնել, որտեղ ուզում էք. Գանձակ թուրքի թաղում, Ելենենդօրֆում, մօտակայ հայ գիւղերում։ Իւրաքանչիւր տան՝ քանի որ տղամարդ կայ, այնքան էլ զէնք ու սարքած ձիեր պէտք է լինին. վերջին հայ-թուրքական կոտորածի ժամանակ սրանց աւելի ունևորները զինված էին Մաուզերի և երեք գծանի կատարելագործված հրացաններով, իսկ բիրդանկաները նրանք տուել էին աւելի պակասաւոր հարևաններին։ Թօփալ-հասանլուեցիները աւելի մարդիկ կոտորած կը լինեն իրանց համար գիւղ հիմնելուց յետոյ, քան թէ իրանց գիւղի բնակիչների թիւն է այժմ։ Բաղմանլարը և Թօփալ-Հասանլուն երկու արատաւոր քոյրեր են, որոնք առաջ են բերում հարևան ազգաբնակութեան համար մի փչացած տարր, վրդովող խաղաղ ժողովրդի խաղաղ կեանքը։

Եթէ պատահում էլ է, որ նրանց գողութիւնը բռնվի, ո՞վ է իրան գլխից ձեռք քաշել որ գնայ և դատարանում մերկացնէ նրանց յանցանքը։ Երբեմն պատահում է, որ նրանք միմեանց հետ են բռնվում և տասնեակներով իրար կոտորում են. դժբախտաբար այդ սակաւ է պատահում։ Նրանք աւելի վտանգաւոր են և վնասակար երկչոտ գերմանացիների համար. փչացնում են նրանց այգիները, գողանում մրգերը, անասունները. Նրանց երկիւղից գերմանացիների պահապանները, որոնք յաճախ լինում են օսեր և լեզգիներ, իրանց ծառայութիւնը կիսատ են թողնում ու փախչում…

Գերմանացիները գետի ընթացքով ունէին ահագին մի անտառ, բացառապէս ընկոյզի ծառերից, որը ձգված էր գետի երկու ափերի վրա, չորս վերստից աւելի. այդ հազարաւոր ծառերի պտուղները վայելում էին միայն Թօփալ-հասանլուեցիները. գողանում էին ոչ թէ միայն տղամարդիկ, սպիտակամորուք ծերունիներ, այլ և կանայք, երեխաներ։

Յուսահատեալ միամիտ կօլօնիստները մի երկար չինական պարիսպ քաշեցին, կարծելով դրանով ամրացնել իրանց սեփականութիւնը, բայց դուրս եկաւ իզուր ջանք և անօգուտ վատնած. աւազակային որջի ամենակարող զաւակները ջարդ ու փշուր արին իրանց դէմ կառուցած պատնէշները և շարունակում անարգել գողութիւնը։ Խեղճ գերմանացիներ, Գերմանիայի տարագրված զաւակներ, ինչ կասէք ձեր՝ թուրքերի երդուեալ պաշտպան Վիլհելմը, եթէ տեսնէք ձեզ, մի մեծ գաղութ, տոգորված կուլտուրայի տենչով, դրախտ դարձրած մի ամայի անկիւն, բայց մի և նոյն ժամանակը ճնշված, կեղեքված, հարստահարված մի բուռն թօփալ-հասանլուեցի սրիկաների ձեռքում, որոնք եթէ աւելի արժէքաւոր իրեր չեն գտնում գողանալու, դուրս են տալիս այգիների վազերի ձողերը։

Այլ ևս ուրիշ ելք չը գտնելով՝ գերմանացիները վերջին երկու տարիներում փչացրին իրանց գեղեցիկ ընկոյզուտը և տեղը նոր ծառեր դրին, ի հարկէ հասարակ և անպտուղ ծառեր…

Կոտորածի, կողոպուտի և աւարառութեան այս սիրահարները դեռ Գանձակի աղէտից շաբաթներ առաջ դատարկեցին իրանց աւազակային որջը, տեղափոխվեցին Բաղմանլար՝ կոտորածը ծրագրելու և սկսելու մտքով. նրանց այն ժամանակ ամբողջ օրերով կարելի էր տեսնել Գանձակի գլխաւոր մզկիթի մօտիկ թուրք խանութներում, այն էլ զինված. ո՞վ էր հարցնողը,—թուրք ոստիկանապետը, թուրք պրիստաւը, թէ՞ թուրք գօրօդօվօյը… Վերջապէս հայերի համբերութեան բաժակը լցվեց. նրանք այլ ևս անկարող եղան տանել այսքան կոտորածների և կողոպուտների հեղինակ թօփալ-հասանլուեցիներին և մի օր՝ Փօրերի Ղարակերում, Գորչակովի այգում, քաղաքի թուրքի թաղում, բազարում, արհեստանոցներում և այլ տեղերում կոտորված և անհետ կորցրած անմեղ նահատակների արեան բողոքը հասաւ երկինքին և հատուցում պահանջեց՝ Աբէլի արեան նման. Նահատակների ազգականները մի գիշեր հրդեհեցին Թօփալ-Հասանլուն, Գանձակի Ղշլաղը, որպէս զի ընդմիշտ ազատվեն նրանից, ապագայում մի փոքր ազատ շունչ քաշեն և անվտանգ երթեւեկութիւն անեն ճանապարհով։

Քանի՜ քանի անգամ են գրվել այս սրիկաների վրա էկզեկուցիաներ, քանի քանի անգամ են սրանց խմբերով աքսորել դէպի նահանգի հեռու ծայրերը, քանի քանի անգամ են կօլօնիստները և հարևան հայ ազգաբնակութիւնը խնդիրներ, համախոսականներ և հանրագրեր տուել պատշաճաւոր իշխանութեան, խնդրելով ազատել իրանց Կովկասի այս վայրագ խուժադուժներից։ Սակայն այդ բոլորի պատասխանը մնացել է «ձայն բարբառոյ յանապատի»։

Այժմ ցաւատանջ հայ ազգաբնակութիւնից, որը օձակի նման շրջապատում է այդ աւազակային որջը, գերմանական կօլօնիայից, համախօսական բողոքներ նորից են ներկայացված Գանձակի ընդհանուր գեներալ-նահանգապետին, որպէս զի նա թոյլ չը տայ Թօփալ-հասանլուեցիներին, իբրև վնասակար և անտանելի մի տարրի, վերաբնակվելու աւերված գիւղում։ Տեսնենք բազմահազար ժողովրդի աղերսի ձայնը ինչ հետևանք կունենայ։

Թօփալ-հասանլուեցիները նահանգական ադմինիստրացիայի միջոցով պահանջում են հարևան հայ գիւղացիներից՝ իբրև վնաս իրանց գետնափորները հրդեհելու փոխարէն՝ հարիւր յիսուն և վեց հազար րուբլի. որքան բարեխղճութիւն. մի քանի խուղ «դեօլեր» փչացնելու համար, քանի որ ինչպէս վերև ասացի, շաբաթներ առաջ այդ որջը դատարկված էր բառի բուն նշանակութեամբ։ Բաս իրանց ձեռքով կողոպտված Գանձակի հարուստ խանութների վնասները, Տէր-Մարտիրոսեանի և Շահրիեանի երկաթէ և տախտակէ պահեստների հարիւր հազարների վնասները ո՞վ է վճարելու։

Նիկ. Գրիգորեանց

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ

Ապրիլի 4-ին

Զաբրայլի բէգի սպանութիւնից մինչև այժմ թուրքերը կանոնաւոր երթեւեկութիւն ունեն մեր գաւառի մի քանի գիւղերի հետ միայն։ Նրանք ծախու են բերում ցորեն, գարի, բըրինձ, ածուխ, փայտ և այլն։ Եթէ հետաքրքրվելով նրանց ներկայ կեանքով, որ և է հարց ես առաջարկում, նրանք մանրամասնօրէն պատմում են քեզ բոլորը։ Այսպէս են պատմում.

«Մեզ մօտ էլ են գալիս խմբի մարդիկ, (ջանբեզարների մասին է խօսքը), բայց արնախում, անսիրտ, անջիգար են նրանք, խեղճ ասած բանը չեն ճանաչում։ Մեզանից պահանջում են ձիերի համար գոմեր, գարի, խոտ, իսկ իրանց համար, տեսակ-տեսակ կերակուրներ։ Եւ ինչ որ իրանց սիրտն ուզի, ճիպոտի զօրով էլ է մեզնից ստանում են։ Մենք պատրաստ ենք ուրախութեամբ հոգեհան հրեշտակների դէմ գնալու, քան մեր ջանբեզարների, որոնք իրանց տմարդի վարմունքով մեզ հանգստութիւն չեն տալիս և մեզ ու մեր չիփլաղ երեխաներին աղքատութեան դուռն են գցել։ Դուք անվնաս էք գտնվել անցեալ կռիւներում, իսկ ապագայ կռիւների եկւորներին ինչ երեսով պէտք է նայէք, ասում են. ձեզ պէտք չէ տուն, տեղ, կով, եզ և ոչխար։ Բոլորը պէտք է ծախէք և զէնք, միմիայն զէնք պէտք է առնել։ Եւ այդպէս էլ նրանք անում են. զօռով ծախել են տալիս գիւղացու վերջին ոչխարը, նրա մի հատիկ այծը և զէնք են առնել տալիս։ Խօսակցութեան վերջում էլ աւելացնում են ջանբեզարները. մայիսին, քոչը գնալու ժամանակ, կռւի առաջին փորձը կը լինի. եթէ մենք յաղթող հանդիսացանք, լաւ, իսկ եթէ ոչ, հայերը մեզ նեղեցին, Պարսկաստանի սահմանում պատրաստ կան 1,500 ձիաւորներ, որոնք մեր նամակին են սպասում։ Նրանք էլ մեզ հետ միասին, Զանգեզուրի հայերին կը կանչենք, մահ կամ ազատութիւն, և մեծ կռւից յետոյ, մենք, կամ նրանք կապրեն Զանգեզուրում»։

Եւ թուրք փախստական աւազակները այսօրինակ գրգռիչ ճառեր ոչ թէ մի, կամ երկու գիւղերում են արտասանում, այլ հարիւրաւոր գիւղեր շրջելով յորդորում են ամենուրեք և ստիպում զինվելու։ Նրանք զրկում են գիւղացուն իր տնտեսական աշխատանքից և արգելք հանդիսանում նրա վար ու ցանքսին։

Ահաւասիկ օրինակ։

Համզալուի քեօւլարեցի Շիւքիւրը, (Բախշալի բէգի ուրեադնիկի սպանողը, և այժմ անուանի աւազակապետ) քանի օր առաջ իր խմբով գալիս է Ուղլեցի գիւղը։ Նկատելով գիւղացիների խաղաղ կեանքը և դաշտային եռանդուն աշխատանքները, նա ժողով է կազմում, խանգարում, դադարեցնում է աշխատանքները և նախատում ժողովրդին, ասելով. «Ձեզ պատիւ չէ բերում ձեռքերը ծալել և նստել, կռիւ է սպասում ձեզ, ինչո՞ւ անտարբեր էք մնում, ո՞ւմ համար էք վարում, ցանում։ Մեր կեանքը մազից է կախված, նախ ապահովել է պէտք այդ կեանքը և ապա վարել, ցանել։ Այսպէս են կարգադրել մեր մեծ կօմիտէները, աւելացնում է Շիւքիւր աւազակապետը»։

Նոյն պրօպագանդան ամեն տեղ կրկնվում է. ահա նոր օրինակ ևս, գաւառի այլ անկիւնում։

Զարուզ գետի հոսանքն ի վեր, Հաջիսամլուի կողմերում տարածվող Զաղազուր, Մօլլուլար և Մինքէնդ գիւղերը, Փաշա բէգի և որդոց ենթարկվող մի քանի թուրքական խմբեր, առաջնորդութեամբ մալիբայլեցի Նաղիի, բայինդուրեցի Մհամմադի և խանդակեցի Մամմադ Իւզբաշու, եկել և յարձակվել են վերոյիշեալ գիւղերի գութանաւորների վրա, ծեծել, թակել են գիւղացիներին, ջարդ ու փշուր են արել լուծ, սամի, կտրտել են թոկեր և փախցրել դէպի գիւղերը, ահ ու սարսափ տարածել ամենքի վրա։ Նրանք խանգարել են գիւղացիների աշխատանքը և սպառնացել, որ պէտք չէ վար ու ցանք անել, այլ զէնքի և ձիու համար պէտք է աշխատել, ուրիշ ոչինչ։ Չը պէտք է ցանել, այլ սերմը պահել ուտելու համար։

Այս է ահա անզուսպ աւազակների գործն ու աշխատանքը, որոնք հրամանատարներ են Նիւթալի բէգի որդոց, Ավզըլլուի, Շամիրի, (գրագիր Սադըխ բէգի և հերոս Մինքէնդի կոտորածի) և նրանց անբաժան ընկեր Սուլթանօֆների, (Իլգրիմ բէգ իր ցեղակիցներով միասին), որոնք և կազմում են Զանգեզուրի թուրք կօմիտէի ճիւղը։ Եւ մեր գաւառի թուրքական բոլոր գիւղերում, նրանց խմբագրութեամբ և հրամանով են կատարվում բոլոր պրօպագանդաները ու ճառերը։

Այս գարունը իր գլխում «չըխաջաղ» ունի (վտանգ), ասում են գիւղացի հայերը. Թող Աստուած հեռու պահի մեզանից չարը, թշնամին։ Խեղճ հայ, օր ու գիշեր էլ աշխատես անդադար, քեզ փրկութիւն չէ լինելու, խեղճ գրայի թուրքից սևերես ես մնալու, քանի կան նրանց կաշին քերթող, արնախում Շիւքիւրները, Նաղիները, Իլգրիմները, Փաշաները, որոնք իրաւունք ունեն ապրելու, քանի դեռ ջրերը պղտոր են և ձուկ որսալը հեշտ է։

Սադանդարեան

ՆԱՄԱԿ ԳՈՐՈՒՑ

Մարտի 23-ին

Աչքի առաջ ունենալով առաջիկայ հայ դպրոցական համագումարը, որ տեղի է ունենալու Էջմիածնում մայիսի 7-ին, աւելորդ չեմ համարում մի փոքրիկ առաջարկութիւն անել տեղիս և փոխանորդութեան մէջ գտնվող դպրոցների վերաբերութեամբ:

Ինչպէս երևաց Վեհափառ Հայրապետի կոնդակից՝ Գօրու փոխանորդութեան եկ. ծխ. դպրոցներից գնալու է մի ուսուցիչ պատգամաւոր: Պարզ բան է, որ ամէն մի պատգամաւոր, հիմնվելով իր անձնական փորձառութեան և միևնոյն ժամանակ տեղային հանգամանքների վրա, իր սեփական կարծիքը պէտք է յայտնէ մի որևէ հարցի վերաբերմամբ: Նոյնը պէտք է անէ և Գօրու պատգամաւորը: Բայց թէ որքան բացառիկ դրութեան մէջ են գտնվում Վրաստանի դպրոցները և որպիսի պատասխանատուութիւն է ընկնում իր կարծիքը յայտնելու և մի որոշ ծրագիր առաջարկելու դերում վերոյիշեալ պատգամաւորի վրա, այդ հարցը շատ պարզ է ու արժանի է լուրջ ուշադրութեան: Եթէ Կովկասի բոլոր դպրոցների աշակերտ-աշակերտուհիները լինէին հայախօս՝ ծանօթ մայրենի լեզուին, այն ժամանակ դպրոցական համագումարի որոշած ծրագիրը անխտիր կերպով կընդունվէր ու կը գործադրվէր դպրոցներում: Բայց ի՞նչ պիտի անել Վրաստանի դպրոցների հետ, որտեղ աշակերտները ոչ թէ միայն վրախօս են բառիս բուն նշանակութեամբ, այլ հեռու են ազգային հոգուց ու առանձնայատկութիւններից:

Երևակայեցէք այսպիսի մի դրութիւն: Ուսուցիչը ներս է մտնում մեծ թէ փոքր դասարան, որտեղ բոլոր աշակերտները մի բառ չը գիտեն ու չեն հասկանում հայերէն. ասացէք խնդրեմ, ի՞նչ անէ խեղճ ուսուցիչը այս իրականութեան առաջ, սովորեցնէ նրանց ամենատարրական խօսակցութի՞ւն թէ՞ պարտաւորեցրած անցնէ այն ծրագիրը, որ իրան առաջարկված է համագումարի կողմից: Պարզ բան է, որ այստեղ ուսուցչի համար մի անելանելի դրութիւն է ստեղծվում:

Վերցնենք, օրինակ, հէնց Գօրու եկ. ծխ. դպրոցը: Այստեղի երկրորդ, երրորդ բաժանման սաները մայրենի լեզուի նոյն պատրաստութիւնը ունեն, ինչ որ առաջին բաժանման մէջ նոր ընդունված աշակերտները, միայն գտնվում են տարիքով և ռուսերէն շատ թէ քիչ գիտութեամբ: Ուսուցիչը ստիպված է լինում բարձր պատրաստականներում զրուցատրական նոյն նիւթն անցնել, ինչ որ առաջին բաժանման աշակերտների հետ: Նոյն իսկ այս տարի ստիպված եղանք մենք ուսուցչական ժամանակոյի ժամանակաւոր ծրագրի ոչ թէ միայն կէսը, այլ և շատ կէտերում կէսի կէսն անցնել, աչքի առաջ ունենալու երեխաների միանգամայն զուրկ լինելը մայրենի լեզուից ու առանձնայատկութիւններից: Բացի դրանից աչքի առաջ պէտք է ունենանք և մի հանգամանք, որ այսպիսի վրախօս սաներին տալ ներկայումս գոյութիւն ունեցող մայրենի լեզուի դասագրքեր շատ անյարմարութիւնների ենք հանդիպում, որի մասին կը յայտնենք իր տեղին:

Այդ իսկ պատճառով՝ որովհետև վրախօս հայերի կրթական գործը հեշտանար ու դրական հետևանքի հասնէր, կառաջարկէի տեղիս հայ փոխանորդին, որ Գօրու փոխանորդութեան մէջ գտնվող բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիներից մի ժողով գումարէր մինչև մայիս և որոշէին իրանց միջից ընտրվող պատգամաւորին տալիք նախապատրաստական կէտերը: Եթէ ժողովը իր կողմից կաւելացնէ էլի ուրիշ անհրաժեշտութիւններ մասնաւորապէս Վրաստանի դպրոցների համար, այդ աւելի լաւ կը լինի և տեղիս պատգամաւորը մի որոշ նախապատրաստութեամբ ու պահանջներով կը ներկայանայ դպրոցական համագումարին:

Վ. Մ—ջանեան

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Ապրիլի 6-ին

Տխուր և ցաւալի վիճակին է մատնված հայոց լեզուի դասատուութիւնը քաղաքային պետական դպրոցում: Այս դպրոցում սովորում են մօտ 300 աշակերտ, որոնցից կէսը հայեր են: Քաղաքային դպրոցն ունի վեց բաժանմունք և մի պատրաստական. բոլոր բաժանմունքներն ունեն առանձին դասարաններ: Հայոց լեզուի ուսումը սկսվում է առաջին բաժանմունքից և շարունակվում մինչև վերջին բաժանմունքը. շաբաթական նրան յատկացված է այժմ երկու դաս: Հայոց լեզուի դասերի ժամանակ I և II, III և IV, V և VI բաժանմունքները միացվում են, այն ինչ ուրիշ դասերին նրանք առանձին են: Երևակայեցէք այն էլ, որ մի դասարանում մի քանի խմբեր կան, որոնց հետ պէտք է ուսուցիչն առանձին պարապէ: Վարձատրութիւնն որոշված է տարեկան 75 րուբլի:

Աշակերտները սկզբից մինչև աւարտելը, կարդում են Տէր-Ղևոնդեանի մայրենի լեզու առաջին տարի. նրանք դուրս են գալիս ուսումնարանից չիմանալով հայերէն ոչ կարդալ-գրել և ոչ խօսել: Համեմատաբար լաւ էր կազմակերպված հայերէնի դասատուութիւնը սրանից 15—20 տարի առաջ: Բիւրօկրատիան այնպիսի խախուտ հիմքերի վրա է դրել հայերէնի դասաւանդութիւնը, որ աշակերտներն իրանք արհամարհանքով են վերաբերվում հայերէն դասերին. հայոց լեզուն պարտադիր առարկայ չէ, հայերէն չիմացող աշակերտը ոչ վերաքննութեան կենթարկվի և ոչ կը մնայ դասարանում: Գօլիցինի օրերով դպրոցի վարչութիւնը այնքան ոգևորվեց, որ հայերէնի դասերը շաբաթական փոխանակ երկուսի՝ դարձրեց մէկ, իսկ հայ կրօնուսոյցին ստիպեցին կրօնը բարձր բաժանմունքներում անցնել բացառապէս ռուսաց լեզուով, թէև կարճ տևեց այդ...

Աւելի վատթար վիճակի մէջն են գտնվում Մարինսկի պետական դպրոցի հայ աշակերտուհիները: Նրանք հայերէն բոլորովին չեն սովորում: Դպրոցի վարչութիւնը վաղուց հրաւիրել է հայ կրօնուսոյցին, նշանակելով կրօնի դասերը միայն, իսկ թէ ինչպէս նա առանց հայերէն կարդալ իմանալու սովորեցնէ աշակերտուհիներին կրօն մայրենի լեզուով, այդ յայտնի է միայն բիւրօկրատ մանկավարժներին: Ամէն ինչ ձևի համար է. ինչ փոյթ, որ աշակերտուհիները չեն կարող առանց հայերէն իմանալու կրօն սովորել, նրանց ինչ փոյթ...

Սակայն ժամանակ է այդպիսի ուղղութեան վերջ դնելու: Հասարակութիւնը պէտք է պահանջէ, որ լուրջ հիմքերի վրա դրվի հայերէնի դասատուութիւնը քաղաքային դպրոցում և մտցնվեն հայերէնի դասերը Մարինսկի դպրոցում: Պէտք է հայոց լեզուն դարձնել պարտաւորեցուցիչ բոլոր հայ աշակերտների և աշակերտուհիների համար և քննութեան ենթարկել սրանց ուրիշ առարկաների հետ հաւասար իրաւունքներով: Քաղաքային դպրոցում պէտք է անջատվեն բաժանմունքներն իրարից և իւրաքանչիւր բաժանմունքում ծրագրի համաձայն նշանակել երկու դաս, ինչպէս այդ բացատրեց անցեալ տարի Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն: Պէտք է ունենանք պանազան խմբեր և ամէն մի դասարանում լինի ընդհանուր պարապմունք բոլոր աշակերտների համար:

Երբ խօսք բացվում է տեղական լեզուների դասատուութեան մասին, դպրոցների ղեկավարները սիրում են արդարացնել իրանց՝ նիւթական միջոցների սղութեան առարկութեամբ: Բայց սա յարգելի չէ: Եթէ ուրիշ առարկաների համար փող ունեն, թող քիչ էլ հայերէնին յատկացնեն, մանաւանդ, որ թոշակադրամը զգալի կերպով բարձրացրել են, դարձնելով քաղաքային դպրոցում 12 րուբլուց՝ 16 րուբլի, իսկ Մարինսկի դպրոցում 18 րուբլուց՝ 22 ր.: Եթէ իրաւ փող չը կայ, այն ժամանակ ամէն մի աշակերտ կամ աշակերտուհուց աւելի առնեն տարեկան 1—2 րուբլի հայերէնի համար:

Այս մասին թող մտածեն այն պատասխանատու պարոնները, որոնք յաւակնութիւն ունեն իրանց ազգի համար ցաւող կարծելու և նրա առաջնորդ համարելու...

Շատ դժուար է գաւառներում հին հասկացողութիւնների դէմ մաքառելու: Օրինակ մեզ մօտ ընդունված է, որ երէցփոխ կամ հոգաբարձու պէտք է լինեն յայտնի ծագումի, հարուստ մարդիկ, իսկ այդպիսիները քիչ չեն կերել ազգային փողերը... Դու ազնիւ ես, գործունեայ, բայց աղքատ և ստոր ծագումի, բայց չեն ուզում քեզ ասպարէզ տալ: Տեղիս երեսփոխանութեան մի քանի տարի առաջ աջողվեց երէցփոխ ընտրել ոչ յայտնի դասակարգից Վարդան Տէր-Յակոբեանին—ս. Գէորգ եկեղեցու համար և սա արդարացրեց բոլորի յոյսերը: Յայտնի ջօջերը շատ կատաղած էին սրա ընտրութեամբ: Երէցփոխ Տէր-Յակոբեան երեք տարվայ ընթացքում բաւական բարեկարգեց եկեղեցին, ծախսելով 700—800 րուբ.: Այժմ Տէր-Յակոբեան մտադիր է աւարտել եկեղեցու գաւիթում գտնվող շինութիւնը, որ կառուցվել է սրանից մօտ երեսուն տարի առաջ, ևնստել է մօտ 2000 ր., ծածկելով առ այժմ նրա կտուրը, որպէս զի չը փչանայ: Եկեղեցուն կից կայ մի գետին, որ ցանկանում է գնել հարևանը՝ 400 րուբլի առաջարկելով և անյապաղ կերպով վերջացնելով, իսկ կօնսիստօրիան պահանջում է՝ նախ հաստատել հողը և պա ծախել, իսկ դա շատ կուշանայ և հնարաւոր չէ:

Հրաւիրում ենք այս հարցի վրա հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը: Լաւ կը լինի, որ կօնսիստօրիան թոյլ տայ անյապաղ կերպով ծախել հողը: Կիսաւարտ շինութեան մէջ կարելի է պատրաստել դպրոց կամ վարձով տալ:

Ն. Ն.

ՀԱՅԻ ԱՂԷՏԸ ՍԵՒ ԾՈՎԻ ԱՓՈՒՄ *)

Ծէբէլդա, ապրիլի 3-ին

Մենք այս յօդուածը գրեցինք մարտի 25-ին, բայց քանի որ այն խաղը, որի մասին գրում էինք, չէր վերջացել, սպասեցինք վախճանին, տալու «Մշակի» յարգելի ընթերցողներին, որքան կարելի է հնարաւորութիւն ճիշտ գաղափար կազմելու այն ցեղի մասին, որը կրում է Թօփչեան ազգանունը: Թօփչեանները, մի և նոյն «կալիբրի» մարդիկ են. նրանց բոլորի խիղճն ու հոգին մէկ է:

Սրանք եօթը եղբայրներ, չեմ յիշում սրանց որդիներին, կեղեքել, կողոպտել, աղջիկ առևանգել, մարդասպանութիւն, զրպարտութիւն, սուտ վկայութիւն, սրանք բոլորը սրանց փեշակն է:

Խեղճ ժողովուրդ, քանի-քանի անգամներ բողոքել է, բայց ոչ մի տեղ լսելի չէ եղել: Ո՞վ է պաշտպանում խեղճին, ո՞վ է մխիթարում, նրա ցաւերին ցաւակից լինում.—մխիթարութեան սուգը և յուսահատութիւնը. նոյն իսկ Փոխարքայի պալատում լսելի չեղաւ մեր խեղճ գիւղացու դառն հառաչանքի ձայնը: Նրանց խնդիրը՝ գոնէ չը հաստատել կանդիդատի պաշտօնում վարքով փչացած և տարիքով փոքր (20 տ.) Գէորգ Յով. Թօփչեանցին, և այդպիսով նրա ձեռքը զէնք չը տալ ժողովրդին պաշտօնապէս կեղեքելու, ի զուր անցաւ: Եւ յիշեալ կանդիդատը, առնելով տանուտէրի ձեռքից պաշտօնը, իր ցանկացած ձևով վրէժխնդիր է լինում ժողովրդից միւս իր ազգակից պաշտօնեաների հետ. նա ոչ մի միջոց չէ խնայում, ժողովրդին այնպէս նեղել է տալիս ստրաժնիկների ձեռքով, մտրակների և հրացանի կոթերի հարուածների տակ, որը անտանելի էր:

Գ. Յ. Թօփչեանի «շայկան», որի մասին գրում ենք, լրագրութեան մէջ արդէն յայտնի է անուղղակի կերպով թէ «աղջիկ փախցնողներ» և թէ «ապահովագրական ընկերութիւններ կողոպտող» մականունների տակ: Ներկայումս նրանք ձեռնարկել են ակտիվ կերպով կողոպուտի մի այնպիսի ձևի, որը յայտնի չէ, թէ ինչպէս է վերջանալու: Զարմանալին այն է, որ մեր բողոքին ուշադրութիւն չեն դարձնում. կամայ-ակամայ ստիպված ենք համոզվելու, որ կառավարչական անձնաւորութիւններից միքանիսն էլ բաժին ունեն այդ կողոպուտից:

Մարտի 20-ին, Թօփչեանների «շայկայի» մի մասը, քաղաքից վերցնելով մի խումբ ստրաժնիկներ, որոնց թւում կային նաև Շարվանի խմբի արևաղ «սանկիւլօտներից», եկաւ-հասաւ մեր գիւղը. նրանց ուրախութեանը չափ չը կար. «կառավարութիւնը ներկայումս ուժեղացել է, էլի ուզածներս կանենք». կարծես թէ ծէբէլդացիները յեղափոխական գործում մասնակցել էին: Կառքից իջնելուն պէս, մեր հերոս Թօփչեանը սկսեց ճառել: «Գեներալ Ալիխանովը հրամայել է որ և է պաշտօնեայ անձնաւորութեան պատասխանել համարձակողին գնդակահար անել, և ես բերել եմ այս ստրաժնիկներին հէնց այդպիսի մարդկանց համար. պէտք է գիւղացիները, առանց որ և է առարկութեան, եթէ ուզում են ապրել, խոնարհեն, բոլոր տուրքերը տան»:

Հետևեալ օրը Գ. Յ. Թօփչեանը ուղևորվեց գիւղի թաղերը. սարսափ թափեց գիւղացիների գլխին. էլ ծեծ, հայհոյանք, ամէն տեսակ ստոր միջոցներ: Այս բաւական չէր. նա այդ ստրաժնիկներով ցանկացաւ նաև բռնաբարութիւններ անել, բայց ձեռք առնված միջոցները արգելք հանդիսացան: Նա այդ մարդկանց տանում—քնեցնում էր այնպիսի տներում, որտեղ տղամարդու բացակայութիւն կար:

Զինուորական դրութիւնը ստիպում է ամէն տեսակ լրբութիւնների դէմ լռել: Ի՞նչ միջոցների դիմէ այն ժողովուրդը, որը արդէն Թիւրքիայում փորձել է իր կաշու վրա ներկայ դէպքերի ամբողջ դառնութիւնը: Նա սարսափած է և չը գիտէ ինչ անել: Եւ այդ հրէշը իր նպատակին հասաւ. մտրակների և հրացանների կոթերի հարուածների տակ գիւղացիներին լծել տուեց սայլերը. անձրևին, ցեխին կրել տուեց գիւղացու օրական պարէնը իր տունը, բոլորովին չը տեսնված չնչին գնով: Եւ այս կողոպուտը, հարկի անվան տակ, կատարվում է պաշտօնական գոյն ստացած, որի մասին մենք, գիւղացիներս, բոլորովին տեղեկութիւն չունենք: Այն ինչ որ գիւղացին պէտք է որոշէ, մի քանի մարդիկ կարում—կցում են:

Գիւղացիներին այնպիսի նեղ դրութեան մէջ գցեցին, որ խեղճերը, գլուխները կորցրած, եկան եկեղեցու դուռը, պահանջեցին ուսուցիչներից փակել ուսումնարանը և գնալ—յայտնել եղելութեան մասին գաւառապետ իշ. Ճանդիէրին: Գնացինք քաղաք և եղելութեան մասին յայտնեցինք գաւառապետին, որը խոստացաւ պաշտօնից հեռացնել վերոյիշեալ աւազակին, և հաւաքված տուրքերի մասին քննութիւն նշանակել. բայց մինչև օրս ոչ մի փոփոխութիւն չէ կատարվել. նա մնում է նոյն պաշտօնի մէջ և շարունակում գազանութիւնը:

Նոյն օրը հէնց մեր ետևից Գ. Յ. Թօփչեանն էլ քաղաք եկաւ իմանալու թէ ինչ ենք անելու: Երբ իմացաւ գաւառապետի կարգադրութեան մասին, կատաղեց, բորբոքվեց, և իր ամբողջ կատաղի թոյնը թափեց ծխական ուսումնարանի ուսուցիչ Գրիգոր Յովսէփեանցի վրա: Նա շտապեց քաղաքից դէպի գիւղ. նա այնպէս տրամադրեց իր ձեռքի տակ եղած սրիկաներին, որ յիշեալ ուսուցչի ճանապարհը կտրեցին, թակեցին փողոցի մէջ և տարան— կանգնեցրին նորին պայծառափայլութեան առաջ: Աւելորդ եմ համարում մէկիկ-մէկիկ յիշել Թօփչեանների կատարած զզուելի արարքները. նրանք ամենաամօթալի կերպով ծաղրում էին իրանց թակարդը գցած անմեղին, որը պատիւ էր ունեցել նրանց գիւղում ուսուցիչ լինելու: Նրանց ուրախութեանը չափ չը կար. պատրաստեցին չը տեսնված ու չը լսված զրպարտութիւններով գրութիւններ, որոնց զօրութեամբ յոյս ունէին աքսորել տալ նրան Ռուսաստանի ներքին նահանգները: «Բունտովշչիկ», Ցաճկաստանից փախած թունդ յեղափոխական, որը պատճառ է եղել Սուխումի շրջանում յեղափոխութեան տարածվելուն, այսպիսի խօսքերը այդ օրերում նրա մակդիրը դարձան: Իշխան Ճանդիէրին ծանօթանալով, որ այդ բոլորը անձնական հակառակութեան արդիւնք է, արձակեց անմեղ զոհին: Յիշեալ Թօփչեանը, դեռ 20 տարեկան, եղել է նոյն Գ. Յովսէփեանի աշակերտը: Նա իր ճակատին դրոշմեց Յուդա անունը, դեռ աւելի վատ. Յուդան վերջը զղջաց, իսկ սա դեռ միջոցների մասին է մտածում թէ ինչպէս իր նպատակին հասնի:

Ո՞ր մէկը գրեմ,—ես ինքս էլ չը գիտեմ: Այսօր, Զատկի երկուշաբթի օրը, նախապէս խորհրդակցած, Թօփչեանների կողմից եկաւ խուլիգանների մի խումբ եկեղեցու դուռը Զատիկը հարամ անելու. նրանցից մի քանիսը զինված էին բերդան հրացաններով. սկսեց մի տեսակ խրախանգում, կանայք սկսեցին քաշվել եկեղեցու բակից. բարեբախտաբար ընդհարում տեղի չունեցաւ. խուլիգանները, տեսնելով իրանց դէմ կանգնած զօրեղ ույժ, սկսեցին հեռանալ: Այս բանին նպաստեց նաև տանուտէր Յով. Մուշեանը:

Մեզ համար ցանկալի էր պարզել «Մշակի» յարգելի ընթերցողներին ներկայ և անցեալ դէպքերի աղբիւրը, բայց մեզանից անկախ պատճառներից ստիպված ենք այդ մասին լռել, բայց կարևոր ենք համարում յիշեալ Թօփչեանների մօտիկ անցեալից բերել մի քանի նմուշներ, որ ընթերցողը գաղափար կազմէ, թէ ինչպիսի նեղ կացութիւն պէտք է ունենայ այն գիւղացին, որը անմիջական շփումն ունի այդ հրէշների հետ:

Թօփչեանների առևանգած աղջիկները սրանք են (մենք բաց ենք թողնում ցուցակը զոհերի պատիւը շօշափած չլինելու համար): Չենք թւում սրանց կաշառքով սպանել տուած մարդկանցը, որոնցից մէկը դեռ նոր քնվեց և 2 մարդ էլ աքսորվեց. պլյուս վերոյիշեալի վրա այն, որ բոլոր Թօփչեանները իրանց հարստութիւնը դիզել են ժողովրդին և ապահովագրական ընկերութիւններին կողոպտելով, այն ժամանակ պարզ կը լինի ընթերցողի համար սրանց նկարագիրը: Ի՞նչ անուն տալ սրանց. թող ընթերցողը մտածէ:

Մօտ ապագայում, երևի, դժբախտութիւն կունենանք Ծէբէլդայի կոտորածի մասին գրելու. և այստեղ հայերս իրար պէտք է կոտորենք: Արդեօք չէ՞ր գտնվի մէկը ցաւերը թեթևացնող անձնաւ. միջնորդելով պատշաճաւոր տեղը, մեզ համար մեծ բարիք արած կը լինէր:

Ա. Զէյթունեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէոդոսիա, ապրիլի 5-ին

«Մշակի» 67 համարի ազգիս հայրապետական դիւանի վարիչ Յուսիկ վարդապետի նամակը՝ փաստող չէ ծերունազարդ Քահանայապետի բուն դժգոհութիւնը ինձ ս. Էջմիածին կոչելու միջոցի և ձևի նկատմամբ:

Հայր դիւանապետը՝ ինձ Էջմիածին տանող երեք տարբեր հեռագրերը ի մի ձուլելով՝ մի հեռագիր է դրել հասարակութեան առաջ: Հարցնում ենք Տ. դիւանապետին,—Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Ներսէս արքեպիսկոպոսի յունվարի 17-ի հեռագիրը՝ յանուն Տաւրիկեան Նահանգապետի ինձ ոստիկանութեան միջոցով Էջմիածին տանելու՝ և կամ յունվարի 16-ին Նորին ս. Օծութիւն ծայրագոյն պատրիարքին ամենայն հայոց հեռացրած լինելով Ներսէս քահանայ Հերթացեանի Թէոդոսիա քաղաքի քահանայագործութիւնից հրամայում է գնալ Էջմիածին, մինչէ այս հեռագրերն էլ Հայրապետական ստորագրութեամբ և կնքով, գիտութեամբ և հաճութեամբ են ծնունդ առել: Սրանք են ծերունազարդ Հայրապետի հոգեկան աշխարհը վրդովել, բայց հայր դիւանապետը այս սաքթով անհամարձակ լռութիւն է պահպանում:

Փետրվարի 28-ի առաւօտեան ժամը 12-ին Վեհի բացասական և դժգոհ պատասխանը նուաստիս թէ «Ես ձեզ չեմ կանչել», վերոյիշեալ վարկաբեկ հեռագրերի ծնունդեան և ծագման նկատմամբ է:

Հրապարակ եմ բերում մի նոր զրպարտութեան նմուշ:

Մարտի 29-ին № 177 հեռագիր եմ ստանում Էջմիածնի սրբազան սինօդի անդամ տէր Յովհաննէս եպիսկոպոսից հետևեալ բովանդակութեամբ.

«Թեմակալ առաջնորդը՝ (Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի) հեռագրում է, որ դուք խլել էք Սուրբաշեան երէցփոխից եկեղեցիների բանալիները՝ և յանձնել կամովին նշանակած մէկին. առաջարկվում է ձեզ անյապաղ վերադարձնել բանալիները՝ և չը խառնվել երէցփոխանական գործում»:

Տեղի չունեցած դէպքի մասին՝ իբրև աքգասիք զրպարտութեան, անմիջապէս հեռագրեցի սինօդի անդամ Յովհաննէս եպիսկոպոսին ի գիտութիւն: Յուսով եմ, որ սինօդը այդ զրպարտող հեռագիրն էլ կը յանձնէ Յակոբ քահանայ Սաւրիկեանին՝ ձեռագրութիւնը երեան հանելու:

Ներսէս քահանայ Հերթացեան

Գանձակ, 3 ապրիլի 1906 թ.

Ի. Ալիբէգօվ անունով մի պարոն տպագրել է «Тифлисскій Листокъ» թերթի № 24-ում մի յօդուած Գանձակի արիւնահեղ անցքերի մասին և մօտ ժամանակներս միևնոյն նիւթի մասին լոյս է ընծայել մի առանձին գրքոյկ հետևեալ վերնագրով՝ «Գանձակի արիւնոտ օրերը հասարակական դատաստանի առաջ»:

Իր երկու աշխատութիւնների մէջ էլ Ի. Ալիբէգօվը յիշում է, ի միջի այլոց, իմ մասին, որպէս 1905 թիւի նոյեմբերի 18-ի կոտորածը կազմակերպողի, և իբրև ապացոյց իմ մասնակցութեան այդ նախատական գործում հիմնվում է այն ճառի վրա, որ տպագրված էր ձեր թերթում «Մշակի» № 7-ում և որը, իբրև թէ, արտասանել էի ես Գանձակի կայարանում օֆիցէրների առաջ, գրգռելու նպատակով նրանց և նրանց ստորադրեալ զինուորներին հայերի դէմ, որպէս յեղափոխականների, կայսրութեան թշնամիների... և, ընդհակառակը, գրաւելու նրանց մուսուլմանների կողմը, իբրև թագաւորի լոյալ հպատակների: Միևնոյն ժամանակ, մատնացոյց է անում, որ այդ ճառը արտասանելու շարժառիթը եղել է զինուորների կողմից փամփուշտը ինձ հետ և սուբինով իմ վերարկուն ծակելը:

Ի. Ալիբէգօվի տենդենցիօզ յօդուածների բովանդակութեան սաքթով ես բացատրութիւն կը տամ ռուսերէն լեզուով հրատարակվող թերթերի էջերում, նոյնպէս և օրինական դատ կը սկսեմ նրա դէմ զրպարտութեան համար:

Իսկ ձեզ, պ. խմբագիր, վերոյիշեալ պատճառներով, խոնարհաբար խնդրում եմ տեղ տալ «Մշակի» մօտակայ համարներից մէկում իմ հետևեալ յայտարարութեանը.

1) 1905 թիւի նոյեմբերի 18-ի առաւօտեան, ժամի 9-ի սկզբներում, երբ արդէն յայտնի էր դարձել քաղաքի հայկական մասում երկու թաթարների սպանութեան մասին, որը և դարձաւ յետոյ բուն շարժառիթը կոտորած սկսելու, ես, Գանձակի նահանգական շինարարական գործերի առանձին անդամ Ն. Մ. Միխայլօվի, նահանգապետի թարգման Ախունդօվի և գաւառական բժիշկ Արտ. Գիր. Սարգսեանցի հետ միասին, գաւառապետ Բէյտուտի գործի պատճառով, ուղևորվեցի Չայլըլար գիւղը (քաղաքից 25 վերստ հեռու), որտեղից միևնոյն անձանց հետ վերադարձայ քաղաք յաջորդ օրը ճաշին: 2) 1905 թիւի հոկտեմբերի մէջերքից սկսած մինչև այս տարվայ փետրվարի 14-ը, երբ ես եկել եմ Թիֆլիս հայ-մուսուլմանական խաղաղարար համագումարին մասնակցելու, ես ոչ մի անգամ չեմ եղել Գանձակի կայարանում, ոչ մի ճառ ես չեմ արտասանել, և իմ բոլոր վերարկուները անվնաս են ու ծակոտված չեն զինուորների սուբինով:

Թղթակցութեան մէջ առաջ բերված ճառը չը պէտք է վերագրվի և իմ եղբօրը՝ երդուեալ-հաւատարմատար Ալաւերդի-բէգ Խասմամեդովին, որը յիշեալ ժամանակամիջոցում ընդամենը մի անգամ է եղել կայարանում, ուր գնացել է, գեներալ-նահանգապետի առաջարկութեամբ, իբրև պատգամաւոր մուսուլման հասարակութեան կողմից, քաղաքապահ զօրքի հրամանատար գնդապետ Բաչևսկիի հետ միասին, երկաթուղու կայարանում ապրող հայերի դէմ տուած մի քանի մուսուլմանների գանգատները ստուգելու համար: Ըստ որում յիշեալ Ալաւերդի-բէգը մի քայլ անգամ չէ հեռացել գնդապետ Բաչևսկիից, ուրիշ օֆիցերների նա չէ տեսել, նոյնպէս և ճառեր չէ արտասանել: Նրան տեսել է կայարանում երդուեալ-հաւատարմատար Նիկոլա Բաքաքուլխեանցը: Նրա վերարկուն անվնաս է և սուբինով չէ ծակված: 3) Երախտագիտութիւնս եմ յայտնում Ի. Ալիբէգօվին, որի շնորհիւ ես առիթ ունեցայ ծանօթանալու «Մշակի» այդ մտացածին—չը գիտեմ ինչու համար—թղթակցութեան հետ:

Յարգանօք երդուեալ-հաւատարմատար՝

Ալէքպէր-բէգ Խասմամեդով

Գանձակ, ապրիլի 8-ին

Գանձակի Աղքատախնամ Յանձնաժողովը իր վերջին հաշիւը հրատարակելուց յետոյ փետրվարի 20-ին (տես «Արշալոյս» փետրվարի 44 համար) ստացել է հետևեալ նուիրատուութիւնները: 1. Կրասնովօդսկից, պարոնայք Նիկողայոս Ա. Մելիքեան, Յով. Մ. Մանուչեան և Ս. Մ. Բարսեղեանի նամակով 270 րուբլի (փետր. 25-ին): 2. Վարշավայից, օր. Մ. Ռոստոմեանից և օր. Աննա Վեքիլեանից տեղական հայ տիկինների և օրիորդների շրջանում հաւաքած 118 ր. (մարտի 2-ին): 3. Թիֆլիսից Վեհափառ Հայրապետի հաստատած յանձնաժողովից—յանձնաժողովիս հայր Ներսիսեանի միջոցով 3000 ր. (մարտի 16-ին): 4. Օմսկ քաղաքից պ. Յովսէփ Կոստանեանից 10 ր. (մարտի 28-ին): 5. Յանձնաժողովիս անդամ պ. Ան. Սերեբրակեանից 10 ր. մարտի 28-ին:) 6. Ծախված ալիւրից գոյացած 36 ր. 10 կ.: 7. Եւլախից յետ ստացված մի գումար 30 ր.: Ընդամենը 3474 ր. 10 կ., աւելացնելով վերջին գումարի վրա նոյեմբերի 22-ից մինչև փետրվարի 20-ը ստացված 12902 ր. 5 կ. ընդհանուր գումարը հասնում է 16376 ր. 15 կ., իսկ ընդհանուր ծախք դեկտեմբերի մէկից 1905 թիւ. մինչև մարտի 31-ը 1906 թիւ., չորս ամսվայ ընթացքում, հասնում է. 13350 ր. 59 կ., որ դուրս գալով ելքը մուտքից մնում է Յանձնաժողովիս տրամադրութեան տակ պատրաստի գումար 3025 ր. 56 կոպէկ:

Իսկ ստացված շորերի հաշիւը հետևեալն է փետրվարի 24-ին Թիֆլիսից տիկին Վարդուհի Ս. Շահպարոնեանից մի հակ նոր կտորներ 366 արշին: Թիֆլիսից պ. Գրիգոր Աբրահամեանի և տիկ. Վ. Շահպարոնեանի միջոցով 2 հակ հին շորեր—175 կտոր հագուստեղէն, 9 թաշկինակ, 10 զոյգ կօշիկ, 33 գլխարկ, 31 զոյգ գուլպայ: Բաքուից պ. Նիկողայոս Յ. Տէր-Գասպարեանի միջոցով իր քոյր տիկին Աննա Յովհաննիսեան Բալաեանից մի հակ հին հագուստեղէն 78 կտոր և պատրաստի բուրդ մէկ քսակ: Թիֆլիսից Վեհ. Հայրապետի հաստատած Յանձնաժողովի քարտուղար պ. Համբարձում Առաքելեանի միջոցով Տագանրոգից ուղարկված 2 հակ հագուստեղէն 229 կտոր: Յիշեալ 366 արշին նոր կտորներ և 482 կտոր հագուստեղէնը, 9 հատ թաշկինակը, 10 զոյգ կօշիկը, 33 գլխարկը և 31 զոյգ գուլպաները բաժանված են տեղիս փոխանորդարանում 315 անձնաւորութիւնների վրա, թէ տեղական աղքատներին, որոնց ընտանիքներից սպանվածներ կան և թուրքաց մասում թաղվածներ, և թէ բացցի և այլ գիւղերի չքաւոր ընտանիքներին:

Տալով սոյն համառօտ հաշիւը հայ հասարակութեան և նուիրատու պարոններին, Յանձնաժողովս պարտք է համարում յայտնել, որ քաղաքիս հասարակութիւնը ընտրված է մի վերստուգող Յանձնաժողով, որը քննում է այժմ Յանձնաժողովիս չորս ամսվայ գործունէութեան հաշիւները (դեկտ. 1-ից 1905 թիւի մինչև մարտի 31-ը 1906 թիւ.) թէ դրամական թէ հագուստեղէնի և թէ նուէր ստացված և դրամով գնված ու աղքատներին բաժանված ալիւրի մուտքն ու ելքը, որը իր կազմած արձանագրութիւնը կը յայտարարէ հայ և ռուս թերթերում և մի օրինակ կուղարկէ Թիֆլիս Վեհ. Հայրապետի հաստատած Յանձնաժողովին:

Յանձնաժողովը իր և հարիւրաւոր արկածեալների կողմից խորին շնորհակալութիւնն է յայտնում այն բոլոր հաստատութիւններին և մեծայարգ պարոններին, տիկիններին և օրիորդներին, որոնք չը խնայեցին իրանց աջակցութիւնը և նուիրաբերութիւնները թեթևացնելու աղքատ արկածեալների ծանր վիճակը և սրբելու նրանց արտասուքը և մխիթարելու նրանց հոգեպէս և նիւթապէս:

Նախագ. Աղքատախնամ Յանձնաժողովի՝
Կորիւն վարդապետ
Անդամներ՝ Ա. Սերեբրակեանց, Ս. Բարաքիեանց, Յ. Կարայեան:
Անդամ-քարտուղար՝ Աւ. Սահակեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բիւրօկրատական շրջաններում յամառ լուր է պտտում, որ ամենամօտ ապագայում բոլորովին վերացվելու է կովկասեան փոխարքայութիւնը: Երկիրը կը կառավարէ քաղաքացիական մասի գլխաւոր կառավարչապետը, և այդ պաշտօնը, ինչպէս հաղորդում է «Веч Гол.» թերթը, կը ստանձնէ Պետական Խորհրդի անդամ սենատոր Ֆօն-Կաուֆման:

Ինչպէս յայտնի է, գեներալ Շիրինկինը ներկայումս Պետերբուրգ է գնում. այդ ուղևորութիւնը, ինչպէս ասում են, կապ ունի Կովկասի ոստիկանութեան մէջ խոշոր փոփոխութիւններ կատարելու խնդրի հետ:

Գեներալ Ալիխանովը, մայրաքաղաքի լրագիրների ասելով, առաջարկել է Կովկասի Փոխարքային վարչական ճանապարհով աքսորել Արխանգելսկի և Վոլոգդայի նահանգները 150 հոգի քաղաքական յանցաւորներ, որոնց նա ձերբակալել է Քութայիսի նահանգում:

Կովկասեան շրջանի զօրքերի գլխաւոր հրամանատար գեներալ-ադիւտանտ Վօրոնցով-Դաշկովի կարգադրութիւնը. «Զօրաբաժինը, որ կազմակերպված էր հայ-թուրքական ընդհարումների առաջն առնելու համար, Գանձակի նահանգի սահմաններում գեներալ-մայոր Գօլօշչապօվի հրամանատարութեան տակ, իր վրա դրված պարտականութիւնները կատարելուց յետոյ, հրամայում եմ կազմալուծել: Այն զինուորները, որոնք մասնակցում էին այդ զօրաբաժնի մէջ, պէտք է գտնվեն Գանձակի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի հրամանատարութեան տակ: Զօրաբաժնի վրա դրված բարդ պարտականութիւնները աջող կատարվեցին շնորհիւ գեն. Գօլօշչապօվի խստութեան, ստիպողականութեան և անկողմնապահութեան: Պարտք եմ համարում շնորհակալութիւն յայտնել գեն. Գօլօշչապօվին նրա աշխատանքի և օգտակար գործունէութեան համար, ծանր հանգամանքներում, որի ժամանակ գործում էր յիշեալ զօրաբաժինը: Շնորհակալութիւն եմ յայտնում բոլոր օֆիցերներին: Շնորհակալութիւն եմ յայտնում բոլոր զինուորներին և կօզակներին նրանց ճշմարիտ և հաւատարիմ ծառայութեան և գերազանց ընթացքի համար»:

Թիֆլիսի գաւառապետ Շանշիևը ուղարկեց բոլոր քաղաքամասի պրիստաւներին հետևեալ շրջաբերականը. «Նահանգապետի հրամանով յայտնում եմ ձեզ, որ ձեր մասի բոլոր բնակիչներին յայտարարէք, որ եթէ պոստի ճանապարհի վրա տեղի կունենայ թալան, պատասխանատուութիւնը դրվում է մօտակայ մարդաբնակ տեղերի վրա, որոնցից պահանջելով գողացված գումարը՝ կը նշանակվի և զինուորական էկզեկուցիա»:

Պետերբուրգից ստացված տեղեկութիւններից երևում է, որ զինուորական վարչութիւնը վառօդի պահեստները Թիֆլիսից տեղափոխում Ալէքսանդրօպօլ:

Գօրից մեզ հաղորդում են, որ գեներալ-նահանգապետը կարգադրեց վերադարձնել բոլոր քաղաքական յանցաւորներին, որոնք աքսորված են հիւսիսային նահանգներում:

Ապրիլի լոյս 13-ի գիշերը, մօտ ժամի 2-ին ինչպէս մեզ հաղորդում են, Դուշէթ քաղաքում կողոպտել են գանձարանը 6 անձինք, Ասլանդուզսկի պօլկի բատալիօնի զինուորների համազգեստով:

«Իրշադին» հաղորդում են Երևանից երկու գիմնազիստների մէջ տեղի ունեցած մենամարտութեան մասին: Գիմնազիստներից մէկը թուրք է, իսկ միւսը ռուս: Դէպքը այսպէս է. մի բնակելի թուրքի բնակարանում, ուրիշ հիւրերի թւում լինում են և գիմնազիստներ Րիսակով և Հաջիբէկլինսկի: Ընդհանուր խօսակցութեան միջոցին նրանք սկսում են վիճաբանել իրար հետ և բանը հասնում է անպարկեշտ յիշոցների: Յաջորդ օրը Րիսակովը մենամարտութեան է կանչում Հաջիբէկլինսկուն: Վերջինս ընդունում է կոչը: Առաւօտեան ժամի 10-ին երկու «հակառակորդները» էլ սեկունդանտների ուղեկցութեամբ գնում են քաղաքից դուրս: Հաջիբէկլինսկին, որին պատկանում որ առաջնութիւնը, կրակում է օդի մէջ: Իսկ Րիսակովը, տեսնելով այդ բանը, հրաժարվեց կրակել և առաջարկեց հաշտվել: Հաշտութիւնից յետոյ նրանք վերադարձան քաղաք:

Օգոստոս ամսում մտադրութիւն կայ կազմել ընդհանուր-մուսուլմանական պատգամաւորական համագումար, որի գլխաւոր նպատակն է քննել ագրարական և դպրոցական հարցերը: Մասնաւորապէս համագումարի ծրագրի մէջ մտնում է և մուսուլմանների հողային դրութեան բարւոքումը Ուֆիմի, Տօբօլեան և Տաւրիկեան նահանգներում: «Стр.»

Թիֆլիսի մի քանի մասերում այս վերջին օրերը ջրի մեծ պակասութիւն է զգացվում և բնակիչները երբեմն ամբողջ օրով անջուր են մնում: Այս խնդրի մասին քաղաքային խորհրդի վերջին նիստում ձայնաւորներից մէկը հարցապնդում արեց քաղաքային վարչութեան անդամներին, որոնց բացատրութիւններից պարզվեց, որ այդ դժուարութիւնը կը վերացվի 2-3 շաբաթից յետոյ, որպիսի ժամանակում ջրանցքի երկրորդ մայր խողովակը (մագիստրալ) և այլ մասերը վերջնականապէս պատրաստ կը լինեն. բացի այդ բացատրութիւնից երևաց որ վերջին տարին համեմատաբար ջրի գործածութիւնը աւելացել է Թիֆլիսում բնակիչների աւելանալով, որոնք ներկայումս բացի զօրքերից 240,000-ից աւել են:

Դիլիջանի հրամանատար գեներալ Սվիտլովը դիմել է դագեստանեան գնդի նորակոչ զինուորներին հետևեալ խօսքերով. «Դուք պէտք է իմանաք, որ կռւելու էք ներքին թշնամիների դէմ, ուստի պէտք է հիմնաւոր կերպով ընտելանաք այն բանին, որ եթէ խռովարար ամբոխի մէջ լինեն ձեր եղբայրները, քոյրերը, հայրերը և մայրերը, այնուամենայնիւ դուք պարտաւոր էք նրանց անխնայ կերպով կոտորել»: «Веч. Гол.»

Ի գիտութիւն Ամերիկա գաղթողների պարտք ենք համարում հաղորդել, որ խիստ բժշկական հսկողութիւն է սահմանել Միացեալ-Նահանգների իշխանութիւնը ներկայումս Ամերիկայի գաղթողների վերաբերմամբ: Եթէ բժշկական քննութեան ժամանակ որ և է մէկը տառապելիս լինի վարակիչ հիւանդութեամբ, այդպիսին, առանց այլ և այլութեան յետ է ուղարկվում: Այդպիսի անախորժ դէպքերից խուսափելու համար անհրաժեշտ է որ Ռուսաստանից գնացողները վաղօրօք իրանց ենթարկեն բժշկական քննութեան:

Պաշտօնական տեղեկութիւնների հիման վրա 1905 թւին Բաքւում կատարված յանցանքների թիւը հետևեալն է. սպանութիւններ և մահափորձեր՝ 497, աւազակութիւններ, թալաններ և այդ տեսակ բաներ 803, վիրաւորութեան և խեղանդամութեան դէպքեր՝ 358, անասնագողութիւններ՝ 25, մանր գողութիւններ և այլ այդ տեսակ բաներ՝ 1,482, հրդեհաձգութիւններ և այլ նման երևոյթներ՝ 87, պատւի անարգանքներ և բռնաբարութիւններ ու նման դէպքեր՝ 18, կանանց փախցնելու դէպքեր՝ 2, այլևայլ յանցանքներ 100, իսկ կատարված յանցանքների թիւը հասնում է 3,372: Հրդեհներ եղել են 1905 թւին Բաքւում 125: Տներ այրվել 199, իսկ ընդհանուր վնասների գումարը հասնում է 2,997,929 րուբլու: Հրդեհների պատճառները. կայծակից՝ 2, վառարանների վատութիւնից՝ 14, անզգուշութիւնից՝ 42, հրդեհումներ՝ 50, և անյայտ պատճառներից՝ 17:

Կովկասի բժշկական մասի վարչութիւնը առաջարկեց Միքայէլեան հիւանդանոցի աւագ բժշկին նոյն հիւանդանոցի պահպանութեան ծախսի նախահաշվից դուրս չը գալ, հակառակ դէպքում, միջոց չունենալու պատճառով, ստիպված կը լինեն փակելու հիւանդանոցը: Այդ պատճառով այդ հիւանդանոցում հիւանդների ընդունելութիւնը պէտք է հասցնել իր սովորական չափի, այսինքն, մահճակալների թիւը պակասեցնել գոնէ 50-ով: Ե՞րբ պէտք է դումայի նշանակված գումարով բացվի քաղաքային հիւանդանոցը, առ այժմս յայտնի չէ:

Թիֆլիսի կառապանները խմբական խնդրով դիմեցին քաղաքագլխին՝ դումային զեկուցանելու, որ իրանցից չը պահանջեն անցեալ 1905 թ. ապառիկը, ցուցակագրեն բոլոր ձիերը, հարկ վերցնելով առաջին կարգի ձիերի համար 7 րուբլի, իսկ երկրորդ կարգի—3 րուբլի, տարեկան. շուտափոյթ օգնութեան համար հիմնել քաղաքային կառքեր, որպէս զի կառապանները ստիպված չը լինեն հիւանդանոց կամ ոստիկանատուն տանելու վիրաւորվածներին, հիւանդներին և հարբածներին. տուրք նշանակել վելօսիպեդների և աւտոմօբիլի վրա, պակասեցնել կամուրջներով անցնելու արժէքը, շտապեցնել Մուխրանեան և Դիդուբէի կամուրջների կառուցանելը և, ամենագլխաւորը, թոյլ տալ, որ իրանք նշանակեն սակագինը և վերջինս խախտելու դէպքում դատի ենթարկել խախտողներին: (Кав.)

Միքայէլեան փողոցի վրա բնակվող տնային վարժուհի Ե. Մ. Պլուժնիկօվան քաղաքային վարչութեանը ներկայացրեց մի յայտարարութիւն, որի մէջ նկարագրում է իր ծանր վիճակը, որը հետևանք է այն բանի, որ անցեալ տարվայ դեկտեմբերի 23—24-ին Դիդուբէում, Շահբուդաղեանի տանը, իր բնակարանում, 5 կօզակներ խուզարկութիւն կատարելու ժամանակ, վիրաւորեցին իրան, ստիպեցին կանգնել բակում ձիւնի տակ, մինչև գիշերվայ ժամը 3-ը, վերցրին նրա բոլոր ունեցածը և 172 րուբլի կանխիկ դրամ, ընդամենը 872 ր. արժողութեամբ: Այն օրվանից նա և իր փոքրիկ աղջիկը հիւանդ են, չունեն ապրուստի ոչ մի միջոց: Պլուժնիկօվան խնդրում է քաղաքային վարչութիւնից օգնել իրան, քաղաքային միջոցներից օժանդակութիւն նշանակելով:

Քաղաքային վարչութիւնը որոշեց, ապրիլի 15-ից քաղաքային ծառայութեան մէջ հրաւիրել երդուեալ հաւատարմատար պ. պ. Ամիրխանեանին և Աթաբէկեանին, նրանց հետ պայման կապել 1 տարով:

Մեզ հաղորդում են մտադրութիւն կայ Թիֆլիսի արքունական թատրոնում բանալ երաժշտական գրադարան-ընթերցարան:

«Н. Кр.» թերթի ասելով, Մելիտոպօլի բանտում խոշոր անկարգութիւններ են տեղի

---

*) Ներկայ թղթակցութեան մէջ բերված տեղեկութիւնները չափազանց պատասխանատու բնաւորութիւն են կրում: Ցանկալի է, որ նրանք պաշտօնապէս ստուգվէին և եթէ ճիշդ է այս բոլորը, ձեռք առնվէին միջոցներ կարգ հաստատելու երկրում: Խմբ.

ունենում: Արդէն մի քանի օր է լուր է պտըտում, որ այնտեղ ինչ որ բաներ են կատարվում: Սակայն բանտի պատերից ոչինչ ճիշտ տեղեկութիւն չէր դուրս գալիս: Լուր է պտտում որ ներսում խարազանահար են անում քաղաքական կալանաւորներին: Շատերը հաստատում էին, որ բանտում ըմբոստացել են քրէական կալանաւորները: Բայց ահա մարտի 23-ին բանտից սկսեցին լսելի լինել սարսափելի աղաղակներ, որտեղ ի միջի այլոց հնչում էին ձայներ, որոնք պահանջում էին կանչել դատախազին: Բանւորների մի խումբ իբրև բողոք բանտի առաջ ցոյց կազմեց կարմիր դրօշակներով և երգերով:

—

Ապրիլի 2-ին Պետերբուրգի երկաթուղային բոլոր կայարաններում հսկողութիւնը սաստկացրված էր. քաղաքի զանազան կէտերում կենտրոնացրած էին զօրքեր անկարգութիւններ պատահելին իսկոյն ճնշելու համար: Փողոցներում շրջագայում էին ժանդարմները և ձիաւոր ոստիկանները: Երիտասարդութեան ջանքերը՝ մուտք գործելու բանտարկութեան տեղերը քաղաքական կալանաւորների զատիկը շնորհաւորելու նպատակով, ոստիկանութիւնը խանգարեց: Զատկի առաջին օրը կախված դրօշակները ոստիկանութեան կարգադրութեամբ առաւօտեան վերցվեցին «Р. В.»

—

«Харьк. Жизн.» թերթը հաղորդում է, որ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը տեղական երկաթուղիների վարչութիւններին ուղարկել է «խիստ գաղտնի» կարգադրութիւններ նախազգուշացնելու համար ծառայողներին, որ նրանցից ով որ կը փորձի գնալ առաջիկայ երկաթուղային համագումարին մասնակցելու, այդպիսիները անմիջապէս կարձակվեն պաշտօնից:

—

Սարատովից «Веч. Гол.» թերթին հաղորդում են, գաւառներից տեղեկացնում են, որ ոստիկանութիւնը փակում է բոլոր մասնաւոր ճաշարանները: Ամենաչնչին բողոքի փորձ անողներին կալանաւորում են: Մասնաւոր ճաշարանները փակելով ամբողջ ազգաբնակութիւնը դատապարտվում է սովամահութեան: Ահա թէ ինչպիսի զէնքով է կռւում բիւրոկրատիան թշուառացած ժողովրդի հետ, սակայն յեղափոխութիւնը դրանով շահվում է միայն: Այսօր տառապող, հալածվող ու սովամահ հեռանկարի առաջ կանգնած ժողովուրդը, վաղը յուսահատութիւնից յեղափոխութեան գիրկը կը նետվի և այն ժամանակ կը խօսի համատարած տերրորը, քայքայիչ անարխիան: Իսկ բիւրոկրատական—ոստիկանական ռէժիմը կը քաղի այն, ինչ որ նրա խելակորոյս ղեկավարները ցանել են: Դրութեան տէրը կը լինի այն հսկան—ժողովուրդը, որ բնութիւնից է ստացել իր իրաւունքները:

—

Մօտ օրերումս ֆինլանդական կայարանում, Պետերբուրգում, կալանաւորվեց մի տիկին: Խուզարկեցին նրան մօտը գտան ատրճանակ, ու տարան ժանդարմների սենեակը: Պատահաբար հերթապահի սենեակը մտնելով մի պարոն, ճանաչեց տիկնոջը, որ Պետական խորհուրդի անդամ, գեներալ Բոբրիկովի նախկին օգնական, ֆինլանդական գործերի մինիստր և ստատս-սեկրետար գեն. Լինտերի ամուսին էր:

—

Պետերբուրգում մտադրութիւն կայ կառուցանել մի նոր բանտ: Այդ առիթով առաջարկված է յատկացնել 204,000 րուբլու մի գումար: Պարզ է որ այդպիսի նպատակներով է փոխառութիւնը կատարվում և ժողովրդի շահերի համար միաժամանակ վնասակար դիտումներով պէտք է գործադրվի: Բիւրոկրատիան այդ ստացած ոսկիներից շղթաներ է ուզում կռել ռուսական նորածին ազատութեան համար, բայց զուր յոյսեր են, յեղափոխութիւնը այնքան էլ թոյլ չէ, որ աջողվի շղթայել:

—

Պետական Դումային ներկայացնելու համար մի պետիցիա է կազմված կանանց ընտրողական իրաւունքի մասին: որին ներկայումս ստորագրել են 100 հոգուց աւելի: Ստորագրութիւններից շատերը ուղարկված են արտասահմանից: Պետիցիայի նախաձեռնողն է կոմսուհի Կապնիստ:

—

Յայտնի գրող Լեվ Դեյչը, որ բանտարկված է Պետրոպաւլովսկի բերդում, լուրջ կերպով հիւանդացել է ցինգայով: Նրա երկերի հրատարակիչ տ. Րուտենբերգ կամեցաւ գրաւականի երաշխաւորութեամբ դուրս հանել նրան այնտեղից, բայց նրանից պահանջեցին 100,000 րուբլի: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ տեսակ պայմաններով նրան ազատել չէր կարելի և չաջողվեց:

—

«XX Вѣкъ» թերթը տեղեկացել է, որ մայրաքաղաքի ոստիկանութեան կարիքների համար ձեռք է բերված 20 հազար փունտ զանազան տեսակ հրացանների և ատրճանակների փամփուշտներ: Բացի դրանից միևնոյն ոստիկանութեան համար ամենայն օր ստացվում են պահեստներում մեծ քանակութեամբ հրացաններ ու ատրճանակներ արկղներով: Այդ պահեստները գիշեր ու ցերեկ սաստկացրած հսկողութեամբ պահպանում են զինված գորոդովոյներով:

—

Բանտային վարչութիւնների կառավարիչները դիմել են ներքին գործերի մինիստրութեան խնդրելով բացատրել թէ ինչպէս պէտք է վարվել այն դէպքերում, երբ քաղաքական կալանաւորները սնունդադադար են յայտարարում, որը վերջին ժամանակներս մի տեսակ համաճարակի բնաւորութիւն է ստացել: Ներքին գործերի մինիստրը ապրիլի 6-ին բացատրել է նրանց, որ բանտային վարչութեան պարտականութիւնն է ամեն միջոց ձեռք առնել սնունդադադարների առաջն առնելու համար: Իսկ եթէ սկսվելու լինեն այդպիսիները, այնուամենայնիւ բանտային վարչութիւնները ոչ մի արտակարգ միջոցներ, բռնութիւններ չը պէտք է գործադրեն սնունդադադարների դիմադրութեան դէմ: Պահանջվում է միայն բանտային վարչութեան ու բանտային բժիշկների կողմից սաստկացրած հսկողութիւն, և այն կալանաւորներին, որոնք սնունդադադարից հրաժարվում են, անմիջական բժշկական օգնութիւն պէտք է ցոյց տալ. բացի վերոյիշեալից ուրիշ ոչ մի միջոցի չը պէտք է դիմել, որովհետև Դուրնովոյի կարծիքով, սնունդադադարները սովորաբար վերջանում են ինքնաբերաբար: Սնունդադադարի բոլոր դէպքերի համար բանտային վարչութիւնները պարտաւոր են անմիջապէս հաղորդել ներքին գործերի մինիստրին: «Р. В»

—

Մինիստրական խորհուրդի վերջին նիստերում, «Веч. Голосъ»-ի ասելով, առաջ վիճաբանութեան պատճառ դարձաւ կառավարութեան հրաժարականի հարցը: Հարցը դրել ու քննում էին ոչ պաշտօնապէս: Կառավարութեան անդամների մեծ մասը անհրաժեշտ համարեց անյապաղ հրաժարական տալը, իսկ Դուրնովօն մատնացոյց արեց, որ հզօր կառավարութիւն ունենալու կարիքը չի վերջանայ նոյն իսկ Դումայի բանալուց: Կոմս Վիտտէն լուռ էր մնացել:

—

Լուսաւորութեան մինիստրութեան ուսումնարանական մասի հոգաբարձուներից մի քանիսը դիմել էին պարզելու թէ ինչպէս պէտք է վարվեն իրանք այն ուսուցիչների հետ, որոնք զէնքեր պահելու կամ պետութեան հակառակ գրուածքների համար կալանաւորված են: Լուսաւորութեան մինիստրութիւնը բացատրել է, որ եթէ այդպիսի ուսուցիչները ընթացքով վնասակար անձինք չեն հիմք չը կայ նրանց զրկելու պաշտօնից, իսկ տեղական իշխանութիւնը՝ իր հայեցողութեամբ կարող է նրանց փոխադրել այլ քաղաք կամ նահանգ:

—

Պետերբուրգում մուրացկանների թիւը անչափ շատացել է, այնպէս որ ամեն օր ոստիկանութիւնը 150-200 հոգի երկու սեռից կալանաւորում է: Այդ ձերբակալվածների մէջ, ըստ արհեստի մուրացկաններ չը կան, այլ մի մասը անգործ մնացած մարդիկ են, իսկ 30-35% խուլիգաններ են: Միւս կողմից անգործ մնացած բանւորները անդադար կոչեր են տպում լրագիրներում, խնդրելով որ քաղաքային հասարակական գործերը իրանց տան կատարելու:

—

Պետական խորհրդի նիստում, ապրիլի 5-ին, քննվել է արդարադատութեան մինիստրի ներկայացրած նոր կանոնները՝ գիւղատնտեսութեան բանւորների մի խօսք կապելու (стачка) դէմ: Այդ կանոններով նրանք, որոնք կը գրգռեն գիւղատնտեսների բանւորներին իրանց վարձված ժամանակից առաջ աշխատանքները ընդհատելու—պէտք է բանտարկվեն 3—6 ամիս ժամանակով: Գիւղական բանւորները, որոնք իրանց կամքով կը դադարեցնեն աշխատանքները և կը կոչեն ուրիշներին էլ դադարեցնելու—բանտարկվում են 3—8 ամսով: Երկար և տաք վիճաբանութիւնից յետոյ այդ նախագիծը ընդունվել է խորհրդից:

—

Բեռլինից հաղորդում են, որ կիսապաշտօնական աղբիւրից բղխած մի լուրի համաձայն՝ իշխան Բիւլօվը կանչելով իր մօտ բանկիր Մենդելսոնին, որ Գերմանիայում ռուսական փոխառութեան մասնակցել ցանկացող բանկիրների գլուխն է կանգնած, ասել է, որ գերմանական կառավարութիւնը չէ կարող թոյլ տալ ռուսական մի նոր փոխառութեան ստորագրութիւնը, Գերմանիայում, որովհետև ինքը Գերմանիան էլ կարիք ունի փողի: Այս լուրը հաստատում է այն շշուկը, թէ իշխան Բիւլօվը նպատակ ունէր իր ճառի երկրորդ մասում յայտարարելու, որ Գերմանիան դիտաւորութիւն ունի մերժելու որևէ կրեդիտ Ռուսաստանին: Բայց, ճառը չը վերջացրած՝ կանցլերը, ինչպէս յայտնի է, ուշաթափվեց:

—

Թեմական առաջնորդներից շատերը կարծիք յայտնեցին ամուսնալուծութեան խնդիրների ռէֆորմների օգտին: Ամուսնալուծութեան վերաբերեալ խնդիրները առաջվայ պէս պէտք է ուղղել հոգևոր իշխանութեանը, բայց վկաների հարցաքննութիւնը և առհասարակ ամուսնալուծութեան վերաբերեալ դատաստանական խնդիրները կը լուծվեն նահանգական դատարաններում: Կասկածաւոր դէպքերում դատը կը կատարվի երդուեալ դատաւորների մասնակցութեամբ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 ապրիլի

ԼՈՆԴՈՆ, 11 ապրիլի: (Րէյտէր): Տեղական լրագիրների ասելով, ռուսաց փոխառութեան ստորագրվող անձանց թիւը շարունակ աւելանում է:

ՍԵՎԱՍՏՕՊՈԼ: Նոյեմբերի ապստամբութեան ժամանակ վնասված բոլոր նաւերը—բացի «Օչակով»-ից—նորոգված են: «Օչակովի» նորոգումը ձգձգվում է, որովհետև դեռ ևս չեն ստացված հարկաւոր պլիտաները: Ջրասուզական աշխատանքներ են գործադրվում «Бугъ» նաւը հանելու համար: Նոր կառուցված «Іоаннъ Златоустъ» նաւը ծով կը մտնի Դումայի բացման օրը:

ԿՐՕՆՇՏԱԴ: Սամարայում գեներալ Սերգիեվի վրա ռումբ նետող գիւղացի Ժուկովը տեղական զինուորական դատարանի վճռով գնդակահարութեան է դատապարտված:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 ապրիլի: Պետական Խորհրդի վերջին ընդհանուր ժողովը նշանակված է ապրիլի 17-ին:

ԼՈՆԴՈՆ: Տեղական մամուլը պնդում է, որ ռուսաց փոխառութեան Անգլիայի վերցրած մասի աջողութիւնը նոյն իսկ փոքր կասկած չէ կարող յարուցանել:

ՓԱՐԻԶ: Մօտ հազար ներկարարներ յայտնել են, որ ապրիլի 18-ին գործադուլ կանեն, եթէ իրանց պահանջներին բաւարարութիւն չը տրվի:

ՄԱՐՍԷԼ: Տպարանական մօտ 1250 ծառայողներ վճռեցին գործադուլ հրատարակել:

ԲԵՐԼԻՆ: Ոստիկանութեան նախագահի յայտարարութեան համաձայն ընդամենը ռուսաց ուսանողներ երկրից դուրս են հանվել 200 հոգի, հասարակական ժողովներում քաղաքական ճառեր արտասանելու համար: Բոլորին էլ իրաւունք է տրվում ներքին գործերի մինիստրի անունով բողոքագրեր ներկայացնել:—Լեհերը որոշել են բոյկոտ հրատարակել Բեռլինի կաթօլիկների եկեղեցուն, պահանջելով լեհական լեզուի լիակատար հաւասարութիւն:—Գերմանական քաղաքների մի պատգամաւորութիւն, գլուխ ունենալով Բեռլինի գլխաւոր քաղաքագլխին, մեկնում է մայիսին Լոնդոն, Պարիզ և Միացած մայրաքաղաքները՝ հաղորդակցութեան նոր միջոցները ուսումնասիրելու նպատակով:

ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՕ: Դրութիւնը բարւոքվում է: Այժմ աւելի մեծ քանակութեամբ են գալիս ուտելեղէններ և վրաններ: Հազարաւոր մարդիկ զբաղված են փողոցները մաքրելով: Մի քանի օֆիցերներ Սան-Ֆրանցիսկօի զոհերի թիւը որոշում են 275 մարդ, միւսները ենթադրում են, որ այդ թիւը չէ համապատասխանում իրականութեան:

ԼՕՆԴՕՆ: Ստորին պալատում ստատս-սեկրետար Մօրլէյ՝ արած հարցապնդումի պատասխանեց, որ Կիտչեների՝ Հնդկաստանի տեղական զօրքի մէջ մտցրած ռէֆորմների պատճառով ծագած անբաւականութեան լուրերը մտացածին են:

ՀՌՕՄ: Սենատում արտաքին գործերի մինիստրը ասաց, որ Մարոկկեան կօնֆերէնցիայի վերջաւորը բաւարարեցրեց բոլոր մեծ պետութիւններին էլ: Կօնֆերէնցիան պէտք է վճռէր երկու մեծ պետութիւնների վէճը, որից մէկը դաշնակից է Իտալիային, իսկ միւսը Աֆրիկայի հարցերի վերաբերմամբ առանձին համաձայնութեան մէջ է: Հաշտութիւնը աջողութեամբ պսակվեց:

13 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 ապրիլի: «Рус. Госуд.»-ի ասելով, գիւղացիական հարցով զբաղվող խորհրդակցութիւնը—հողային բարեկարգութեան և երկրագործութեան գլխաւոր կառավարչի նախագահութեամբ արդէն վերջացրել է իր պարապմունքները: Ներկայումս մշակվում է խորհրդակցութեան ընդունած որոշումների վերջնական խմբագրութիւնը, որ ապրիլի 15-ին յանձնվելու է մինիստրների խորհրդին քննելու համար:—Զինուորական գլխաւոր դատարանը քննութեան առաւ գեներալ Դոբրովոլսկու և իշխան Բագրատիօնի վճռաբեկ բողոքագիրը, որոնց Կիեւի զինուորական դատարանը մեղաւոր է ճանաչել իշխանութեան անգործունէութեան մէջ այն ժամանակ, երբ 1905 թ. Կուրսկ կայարանում ամբոխը այրում էր պօրուչիկ Մախալանովին, և որոնց դատապարտել էր առաջինին 2, իսկ երկրորդին՝ 3 տարվայ բանտարկութեան, բողոքագիրը չէ յարգվել:

ՓԱՐԻԶ, 12 ապրիլի: Ռուսաց նոր փոխառութեան դէմ յարուցած սօցիալիստների աֆիշները պօստով ուղարկվում են իբր հրահանգներ: Բայց այդ ընկերութիւնը անաջողութեան է հանդիպում: Բանկերի սինդիկատի ներկայացուցիչները յայտնել են ռուսաց լրագիրներից մէկի թղթակցին, որ փոխառութիւնը կը ծածկվի մի քանի անգամ: Պարիզեցիները շատ անհանգիստ են մայիսի 1-ին սպասվելիք դէպքերի առիթով: Ձեռք են առնված արտակարգ միջոցներ: Շատ փողոցներում դրված են ոստիկանական հեծեալ և հետևակ պահակախմբեր:

Կ. ՊՕԼԻՍ, 12 ապրիլի: Մեծ վէզիրի և արտաքին գործերի մինիստրի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ պարսից դեսպանը մատնացոյց է արել այն թերևս ծագող հետևանքների վրա, եթէ Բ. Դուռը չը զիջէ, և արել է երկու առաջարկութիւն այն պայմանով միայն, եթէ թուրքերը նախապէս կը մաքրեն Վանի ճանապարհը: Խորհուրդ է տուել տարաձայնութիւնների դէպքում, առաջին առաջարկութիւնը յանձնել միջնորդ դատարանի, առանց որի համաձայնութիւնը անկարելի է, իսկ երկրորդ առաջարկութեան վերաբերմամբ պահանջում է յանձնել սահմանային բոլոր վէճերը լուծող դատարանին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 ապրիլի: Լրագրների համոզմունքի առիթով, որ սահմ.-ռամկ. կուսակցութիւնը հէնց առաջին իսկ հերթում Դումայում արծարծելու է հրէական հարցը, ընտրութիւնների տակտիկային նուիրած յօդուածների մէջ մի քանի պարոններ պնդում են, որ այդ համոզմունքը պէտք է բացասել, ինչպէս և ընտրողական ընդունելութիւնը, որովհետև այդ կուսակցութեան գլխաւորները այժմ արդէն վճռել են ոչ մի հրէական հարց Դումայում ոչ մի դէպքում չարծարծել, հակառակ դէպքում նրա դէմ կելնեն գիւղացիական ներկայացուցիչները, և այդպիսով նա կը զրկվի Դումայում ունենալիք ազդեցութիւնից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 ապրիլի: Այսօր բացվեց ռուսաց կայսրութեան առևտրի և արդիւնաբերութեան ներկայացուցիչների համառուսական երկրորդ համաժողովը: Նախագահ ընտրվեց Մակսիմովը: Առաջին օրը նուիրվեց արդիւնաբերական և առևտրական հաստատութիւնների ներկայացուցիչների համառուսական համագումարների գրութեան հարցի քննութեան: Լուրջ տարաձայնութիւններ չեղան: Համաժողովին մասնակցում են 150 անդամներից աւելի:—Ներքին գործերի մինիստրութիւնը մտադիր է ազատութիւն շընորհել քաղաքական յանցաւորների շատ կատեգօրիաներին: Ազատվելու են բոլորը, բացի տերրորիստներից: Ազատութեան մասին մի ընդհանուր ուկազ կը հրատարակվի: «Ազատ գիւղացութեան երկրում» բրօշիւրի հեղինակի գործի համար պատասխանատուութեան է ենթարկված նաև հրատարակիչ Պարամոնովը:—Պօստ-հեռագրական գլխաւոր վարչութիւնը մտադիր է աւելացնել միջազգային հեռագրաթելերի քանակը, մշակում է մի նախագիծ, որի համաձայն թելերը պէտք է պաշտպանվեն թէ գողացվելուց և թէ փչանալուց, ինչպէս և անցկացնելու հողի միջով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 ապրիլի: Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մշակել է է մի նախագիծ ժողովրդական բարձրագոյն դպրոցների որոշումների առիթով, որոնք պէտք է ծառայեն իբրև շարունակութիւն տարրական դպրոցների, որոնց փոխարինում են այժմեան քաղաքական դպրոցները: Այդպիսիները հիմնում են կառավարչական հաստատութիւնները, հասարակական և դասակարգային կազմակերպութիւնները և մասնաւոր մարդիկ, իսկ կրթա—դաստիարակչական նկատմամբ ենթարկվում են մինիստրութեան հսկողութեան: Դասընթացքը լինելու է չորսամեայ: Կարող են մտցնվել լրացուցիչ առարկաներ ընդհանուր զարգացման բնաւորութեամբ, և պրոֆեսիօնալ ու արհեստագիտական դասարաններ, ի նկատի առնելով տեղական պայմանները և պահանջները:

ՎԻԼՆԱ, 12 ապրիլի: Մի քաղաքամասում Դումայի ընտրութիւններին հրէաների մասնակցութիւնը ընդարձակ չափեր ընդունեց. 970 ընտրողներից ներկայ էին 913, որ անում է 97%-ից աւելի:

ՎԱՐՇԱՎԱ, 12 ապրիլի: Բոլոր 57 փոխ մասնաժողովներն էլ սկսեցին ընտրութիւնները: Ժողովուրդը խառնվում է շարունակ: Գալիս են բոլորը. ագիտացիան մղվում է եռանդուն կերպով: Ըստ երևոյթին 6 թաղամասերում որ պէտք է տան 40 ընտրեալներ, աջողութիւնը քրիստոնեաների կողմն է, չորսում—ուր պէտք է ընտրվեն 28 ընտրեալներ՝ աջողութիւնը հրէաների կողմն է, իսկ, մնացած երկու թաղամասերում, որ ընտրելու են 12 ընտրեալներ—հետևանքը կասկածելի է:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Յ. Մ. ՔԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱԻՆՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Գ. ԿԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ղ. Գ. ԿԱՐԱԳԵԶԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԴՐՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.:
Խ. Գ. ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով:
Ելիզավէտինսկայա փողոց, 101, տելէֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր:

Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և էլեքտրո-բուժութիւն:
Գ. Ն. ԴԵՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ի. Ե. ԱԻՆՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՋԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի:
Գ. Ա. ԲԷՅԷՐ—երեխայոց և ներքին հ.

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն: Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.: Օպերացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան: Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմէրներից:
(չ.ու.կ.) 46—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կաղետսկայեա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կաղետսկի փողոցից № 2.
(ա. օ.) 126—300

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. ՋԱԽԱՐԲԷԿԵԱՆ
Ներքին եւ ներվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7: Լերմոնտովսկայա փողոց, տուն № 16:
(ա. օ.) 13—50

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկեւիչի փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն):
(ա. օ.) 67—100

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատօր Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին: Ընդունելութիւնը ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան: Բարիչչևսկայա փող. № 1. «պօժարնի կօմանդի» դիմացը. տելէֆօն № 11:
(ա. օ.) 15—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը: Կուկիա, Սիմեօնովսկի փողոց № 20:
(ու. կ. ե.) 11—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8: (ե.ա.)53—100

Թարգմանվում է և շուտով լոյս կը տեսնի
«КАКЪ и КАКУЮ СВОБОДУ ДОБЫЛИ СЕБѢ ФРАНЦУЗЫ»
Ս. Ե.

ՀՐԱՒԷՐ

Մողնու ս. Գէորգ եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը յայտնելով, որ այս ամսի, ապրիլի 16-ին, կիրակի, ցերեկվայ ժամը 12-ին, նշանակված է ծխական ընդհանուր ժողով, խնդրում է ներկայ լինել, քննելու և որոշելու հետևեալ հարցերը.

1. Ջեռուցման գործերի դրութեան մասին.
2. Նախահաշիւ դպրոցի և եկեղեցու 1906 թ. և հաշիւ եկեղեցու 1904/5 թ.
3. Ծխական տուրքի սահմանումն.
4. Գայիանեան դպրոցի շինութեան հարցը.
5. Ներս. Հոգ. ընտր. 2 պատգամաւորի ընտրութիւնը.
6. Երէցփոխի զեկ. Յօնանեան դպր. հոգ. ընտր. մասին.

Նախագահ հոգաբարձութեան՝ Հ. Առաքելեան
Անդամ-երէցփոխ՝ Ս. Արասխանեան
Անդամ-քարտուղար՝ Լ. Քալանթարեան
(չ. ու. կ.) 1—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն Թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեան, ապրիլ ամսիս 16-ին, առաւօտեան ժամը 10-ին, Թիֆլիսի Ջորաբաշի ս. Գէորգ եկեղեցու ծխական բոլոր այր մարդիկ 25 տարեկանից սկսած, կանոնադրութեան 6-րդ յօդուածի համաձայն, բոլորն էլ հրաւիրվում են եկեղեցի ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ, որով առաջինները պարտաւոր են Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող խորհրդին մասնակցելու:
Գրիգոր աւագ քահ. Մանդակունի
(հ.ու.չ.) 1—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն Թեմիս սրբազան Առաջնորդի կարգադրութեան, ապրիլ ամսոյ 16-ին, առաւօտեան 10-րդ ժամին Կուկիոյ Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցւոյ ծխական բոլոր այր մարդիկ, 25 տարեկանից սկսած, կանոնադրութեան 6-րդ յօդուածի համաձայն, բոլորն էլ հրաւիրվում են եկեղեցի ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ, որոնց առաջինները պարտաւոր են Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող խորհրդին մասնակցելու:
Թիֆլիս քաղաքի Կուկ. Նորաշէն եկեղեցւոյ աւագ երէց Ալեքսանդր քահանայ Տէր-Յովհաննիսեան:
(չ. ու. կ.) 1—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն Թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեան՝ ապրիլի ամսիս 16-ին, առաւօտեան 10-րդ ժամին Բեթղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու ծխական բոլոր այր մարդիկ, 25 տարեկանից սկսած, կանոնադրութեան 6-րդ յօդուածի համաձայն, բոլորն էլ հրաւիրվում են եկեղեցի ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ որոնցից առաջինները պարտաւոր են Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող խորհրդին մասնակցելու:
Թիֆլիս քաղաքի Բեթղեհէմի ս. Աստուած. եկեղեցու աւագ երէց՝ Գէորգ քահանայ Մեհրաբեանց
(ու. շ.) 1—2

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ապրիլի 16-ին, առաւօտեան ժամի 12-ին Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցում լինելու է ծխականների ժողով երկու պատգամաւոր ընտրելու Ներսիսեան հոգևոր դպրոցի հոգաբարձական ընտրութեան մասնակցելու համար. ուստի խնդրում եմ յարգելի ծխականներին ներկայ լինել յիշեալ ժողովին:
Սարգիս քահ. Շիոյեանց

ՀՐԱՒԷՐ

Խնդրում եմ ապրիլ ամսի 16-ին, կիրակի, ժամի 12-ին, պատարագից յետոյ, շնորհ բերել Ջրկինեան ս. Կարապետ եկեղեցի՝ ծխականների ժողովին մասնակցելու, ուր, համաձայն սրբազան առաջնորդի հրամանի, ընտրվելու են՝ 1) երկու պատգամաւոր՝ Ներսիսեան դպրոցի հոգաբարձուաց ընտրութեանն մասնակցելու, 2) Հոգաբարձուներ՝ Ջրկինեան ս. Կարապետ եկեղեցու ծխական դպրոցի համար: Ժողովին կարող է մասնակցել ընտանիքի ամեն մի արական անդամ, եթէ տարիքը 25-ից պակաս չէ:
Ծխատէր՝ Գրիգորիս ք. Երզնկեանց
(ու.շ.) 1—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն Թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեան ապրիլ ամսի 16-ին, առաւօտեան 12 ժամին Զուգուրեթի սուրբ Աստուածածին եկեղեցու ծխական բոլոր այր մարդիկ՝ 25 տարեկանից սկսած կանոնադրութեան համաձայն, բոլորն էլ հրաւիրվում են եկեղեցի ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ, որոց առաջինները պարտաւոր են Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող խորհրդին մասնակցելու:
Թիֆլիս քաղաքի Զուգուրեթի եկեղեցու ծխատէր Յովհաննէս քահանայ Իպրաշեանց
(ու. շ.) 1—2

ՀՐԱՒԷՐ

Թեմիս բարձր սրբազան առաջնորդի կարգադրութեամբ առաջիկայ կիրակի, ապրիլի 16-ին, ս. պատարագից յետոյ, 12 ժամին, Աւետեաց Ջիգրաշէնի սուրբ Աստուածածին եկեղեցում լինելու է ծխականների ժողով երկու պատգամաւոր ընտրելու Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւններին մասնակցելու համար: Ուստի խնդրեմ մեծ. պ.պ. ծխականներին շնորհ բերել նշանակեալ ժամին ժողովին:
Գէորգ աւագ քահանայ Աբուլեանց
(ու. շ.) 1—2

ՀՐԱՒԷՐ

Համաձայն առաջադրութեան գերապատիւ Թեմակալ առաջնորդին Հայոց Վրաստանի՝ մօտիկ ապագայում կայանալու է Թիֆլիսի Ներսիսեան Հայոց Ազգային հոգևոր դպրոցի հոգաբարձութեան ընտրութիւնը: Ուստի ս. Նշան եկեղեցու ծխականները հրաւիրվում են ամսիս 16-ին, կիրակի օրը, ժամը 12-ին, պատարագից յետոյ ընտրելու երկու պատգամաւոր վերոյիշեալ հոգաբարձական ընտրութեանը մասնակցելու:
Միքան ս. Նշան եկեղեցու՝
1—1 Գր. ք. Շերմազանեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն Թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեան՝ ապրիլ ամսոյ 16-ին, առաւօտեան ժամը 10-ին Նաւթլուղի ս. Գէորգ եկեղեցու ծխական բոլոր այր մարդիկ 25 տարեկանից սկսած, կանոնադրութեան 6-րդ յօդուածի համաձայն, բոլորն էլ հրաւիրվում են եկեղեցի, ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ, որոց առաջինները պարտաւոր են Ներսիսեան Ազգային Հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող խորհրդին մասնակցելու:
Թիֆլիս քաղաքի Նաւթլուղի ս. Գէորգ եկեղեցու աւագերէց՝
Ալեք. աւ. ք. Վարդանեանց
(ու.շ.) 1—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեան համաձայն, ամսիս 16-ին, առաւօտեան ժամը 10-ին Տափի-Թաղի (Քամոյեանց) եկեղեցու ծխական բոլոր այր մարդիկ, 25 տարեկանից սկսած, կանոնադրութեան 6-րդ յօդուածի համաձայն, բոլորն էլ հրաւիրվում են ս. Նշան եկեղեցու ուսումնարանը, ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ, որոնցից առաջինները պարտաւոր են Ներսիսեան Ազգային Հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող խորհրդին մասնակցելու: Առանձին հրաւիրաթերթեր չեն ուղարկվիլ:
Թիֆլիսի Տափի-Թաղի եկեղեցու աւագերէց՝
Յովհաննէս Մարտիրոսեանց
(ու.շ.կ.) 1—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Կիրակի, ապրիլի 16-ին
Հայ դրամատիկ դերասանական խումբը
կը ներկայացնէ
Երկրորդ անգամ նոր գրված ողբերգութիւն
ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ
5 գործ. հեղ. Վ. Տիրացեանի
Մասնակցում են. տ. Նոնիկեան, պ.պ. Աբելեան, Ալաջեան, Աղիլխանեան, Թաշճեան, Մամիկոնեան, Միրզոյեան, Պետրոսեան, Ռշտունի և ուրիշները:
Տեղերի գները սովորական են:
Սկիզբը ժամը երեկոյեան 8-ին:
Տոմսակները կարելի է ստանալ վաղօրօք թատրոնի կասսայում: (ա.օ.) 1—3

Արտասահմանում Փրեբելևսկի կուրսերն աւարտած, Պետերբուրգի կուրսերի պրոֆ. Լեսգաֆտի նախկին ունկնդրուհի—պարապմունքներ է որոնում: Դիմել գրաւոր (ռուսերէն). Судебная ул., 44, курсы иностр. язык., для Д. Г. Р. (ա.օ.) 3—3

Սովորեցնում եւ Պատրաստում ենք

բոլոր միջնակարգ դպրոցների բոլոր առարկաներից: Կատարեալ աշխատանքի բաժանում դասաւանդութեան մէջ: Նոր լեզուներից մասնագէտ-գերմանացի: Ընդունում ենք նաև գիշերօթիկներ: Ելիզավէտինսկայա փող. տ. 74 (տուն Ալէկօվի) բնակարան № 3, ուսանող Հ. Հ. 2—3

Լոյս տեսաւ
ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս.-Ի
կազմած
ՍԱՍՈՒՆՑԻ ՅՈՎՆԱՆԸ
144 երես, 30 կոպէկ
Թիֆլիսի գրավաճառների մօտ ծախվում են այլ և Խուլ Խաչիկ, Քաջ Աղասի, Ժամանակը Ոսկի, Գալօ-Ախօ, Աստուած չը ճանաչող և միւս գրքերը:
Հեղինակի հասցէն՝ Ներս. դպրանոց: 3—5

Լոյս է տեսել և վաճառվում է
Թիֆլիսի, Գանձակի և Բագուի գրավաճառանոցներում
„ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“
Ազգային լիակատար երգարանը 5-րդ արտապագրութեամբ, նոր երգերով եւ բանաստեղծութիւններով, բաղկացած 374 մեծադիր երեսներից: Գինն է 1 ր., ճանապարհածախսով—1 ր. 20 կ.: Օտարաքաղաքացի ցանկացողները յայտնելով իրանց ճիշդ հասցէն, դիմում են Բագու, «Սոխակի» հրատարակչին, հետևեալ հասցէով. Протоіерею Григорію Григорянцъ Баку.
Այս օրերս լոյս կը տեսնի «Богъ въ Природѣ» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը:
(պ.) 2—6

ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՆ հայոց Վրաստանի, յայտնում է, թէ ի 14 սոյն ապրիլի ամսի, նրա ատենի մէջ նշանակված է աճուրդ կապալով տալու հիմնաւոր նորոգութիւնը Էջմիածնապատկան «Դաշտի խաչի» անուանեալ տան, Վօրօնցօվսկի փողոցի վրա 6-րդ քաղաքամասում:
Անդամ կոնսիստորիայի՝
Զաքարիա քահ. Զարգարեա
(ե. հ. շ.) 2—

Ձեռնարկելով Բոստոնում գեղարուեստական մի հաւաքածոյի հրատարակութեան «Կովկաս» վերնագրով, բազմաթիւ շքեղ, գունաւոր պատկերներով՝ խնդրում ենք ձեզ չը զլանալ ձեր աջակցութիւն որ և է ձեզ մատչելի միջոցներով:
Մեր հաւաքածուի ընդհանուր ծրագիր ընդգրկելու է.

1. Բանաստեղծութիւններ:
2. Վէպիկներ, պատկերներ, նորավէպեր
3. Հայկական հարցը Կովկասում և Տաճկահայաստանում.
4. Կովկասեան կոտորածներ.

Գեղարուեստական մասի մէջ մտնելու են պատկերներ և տեսարաններ, հայկական գլխաւորապէս կովկասեան կեանքից են,
Այս հաւաքածոն լոյս է տեսնելու մայիսին և ուստի խնդրում ենք ձեզ, բարեհաճէք հասցնել ձեր օժանդակութիւնը մեր ձեռնարկութեան առ աւելի 20 օրվան մէջ ներկայ մամբ ընդունելուց յետոյ:
Հարկաւոր ենք համարում յայտնել, որ հաւաքածուի ողջ արդիւնքը յատկացվելու է կովկասեան աղէտներից վնասված հայ գրականութեան, պ. Մելիք-Ազարեանցի Ջոզով: Աշխատակցելու են մի քանի ականաւոր հայազգի ամերիկացիներ:
Մեր հասցէն՝ Alexander Melik, «Ararat» Publ. Co. P. O. Box 4, Chelsea, Mass. Etats Unis. Ի դիմաց Ցանկամասերի՝
3—2 Ալեքս. Մելիք

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва «ГЕРМЕСЪ» Мадат. ул. № 15